

ԷՍՄԱՆՈՒՒԼ ԿԱԶԱԿԵՎՐՉ

ՀԱՅՐԱ ՀՅՈՒՐ  
Է ԳՐԱԴՐՈՒՄ ՆՄԱԳՐԱՆԻ

Հայաստանի համապատասխան պետական  
ԵՐԵՎԱՆ 1965

Թարգմանություն՝  
Վ. ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆԻ

Ձևավորումը՝  
Լ. ԷԼՈՅԱՆԻ և Ռ. ԶՈՒԼՀԱԿՅԱՆԻ

Казакевич Эммануил Генрихович  
Приезд отца в гости к сыну  
На армянском языке  
Издательство «Айастан»  
Ереван, 1965

## ՀԱՅՐԸ ՀՅՈՒՐ Է ԳԱԼԻՍ ՈՐԴՈՒՆ

**Ի** վան Երմոլանն սպասում էր հորը: Նամակում չէր ասված, թե հատկապես ե՛րբ և ո՛ր գնացքով է գալու, և Իվանը հուզվում էր ու սրտնեղում գյուղական նամակի թափթփված գրելաձևի վրա, որի մեջ մեկնելու մասին հայտնվում էր երկու խոսքով, այնինչ հեռավոր ազգականների ու հարեւանների որպիսության մասին, որոնց Իվանը գրեթե մոռացել էր, դպրոցական տեսրակի ամբողջ չորս երես էր լցրած:

Քսանույթ տարի առաջ տասնհինգ տարեկան տղա Իվանը գյուղից հեռացավ, ավելի ճիշտ՝ վռնդվեց խորթ որդուն չսիրող երիտասարդ մայրացուի կողմից, ոնց որ հեքիաթում: Նրա հետագա կյանքը նույնպես, եթե ետ նայելու լինենք և հայացքով ընդգրկենք ամբողջ պատկերը, որոշ տեսակետից նման էր հեքիաթի—դժվարին, ոչ-հասարակ իր առօրյայով, բայց լի հրապուրիչ դեպքերով ու հրաշալի փոփոխություններով:

Վուշե մապերով, տրեխներով ու կանեփի շնափ-  
կով փոքրիկ գեղջուկ, նա եկավ մարպային Պենպա  
քաղաքը, իսկ այնտեղից հավաքագրվեց Մագնի-  
տոգորսկի նորակառույցում. քաղաք, որի մասին  
խոսվում էր այնպես, ասես գոյություն ուներ, այնինչ  
այն դեռ չկար: Որպես սևագործ, արհեստագործա-  
կանի աշակերտ, հյուան, բետոնագործ՝ Իվանը  
տասնյակ հազարավոր ուրիշների հետ գործարանը  
կառուցեց իր ձեռքերով. իսկ գործարանն իր հեր-  
թին հալեց ու հղկեց, աննկատելի տաշեց ու հղկեց  
նրան ըստ իր ձևի ու նմանության: Այդպիսով, հան-  
դարտաբար, ամոթխած գյուղացի տղան դարձավ  
հռչակավոր, որի անունը ամեն անգամ հիշվում էր  
երկրի անվանի դոմենագործների հետ նույնպիսի  
անխուսափելիությանը, ինչպես, օրինակ, Լերմոն-  
տովն է հիշատակվում ամեն անգամ ռուս ամենա-  
հռչակավոր բանաստեղծներին թվարկելիս: Մշտա-  
պես սոված, աշխարհի մասին բոլորովին աղճատ-  
ված պատկերացումով և մեծերի հանդեպ քրտնելու  
չափ վախկոտ ագռավաճուղը դարձավ հանգիստ,  
ինքնավստահ մի մարդ, մեծ ընտանիքի հայր, գըր-  
քամով և թերթերում փոքրիկ հոդվածներ գրելու սի-  
րահար. շինարարական բարաքների ամենացուրտ  
անկյունների անտրտունջ բնակիչը դարձավ Ուրա-  
լի աջափնյա նոր քաղաքում չորս սենյականոց տան  
ու պարտեզի սեփականատեր, քաղսովետի դեպու-  
տատ, պանապան հանձնաժողովների անդամ՝ մի

խոսքով, մեկը նրանցից, ովքեր կարող էին կոչվել Մագնիտոգորսկի պատվավոր քաղաքացիներ:

Բնական է, որ Իվանը սիրում էր Մագնիտոգորսկը թաքուն, բայց ուժեղ սիրով: Քաղաքը նրա համար ոչ միայն բնակավայր էր, ինչպես հին քաղաքներն են իրենց բնակիչների համար. մեկը չէր կարող գոյություն ունենալ առանց մյուսի. եթե քաղաքը չլիներ, Իվանը Իվան չէր դառնա. եթե Իվանը չլիներ՝ քաղաքը քաղաք չէր դառնա: Միաժամանակ հայրական և որդիական սերը հապվադեպ զգացմունք է. այդպիսի զգացմունք էր տածում Իվանը Մագնիտոգորսկի հանդեպ:

Նա նամակ չէր գրում տուն. ոչ այնքան վիրավորանքից, որքան իր հանդեպ տնեցիների անտարբերության ճնշող ու պարզ գիտակցությունից: Միայն երբեմն-երբեմն մերթ հիսուն, մերթ հարյուր ռուբլի էր ուղարկում նրանց, իսկ երբ ամուր ուտքով կանգնեց դոմենյան վառարանի առջև, նախ որպես երրորդ, ապա երկրորդ և վերջապես իբրև ավագ հնոցապան, սկսեց ամեն ամիս երկու հարյուրավան ռուբլի ուղարկել: Ի պատասխան, երբեմն ստանում էր կարճառուտ խպրվոց, թե դրամն ստացված է, ավելացրած սովորական բարևները զանազան քեռիների ու խնամիների կողմից: Իվանի կինը՝ Լյուբով Իզնատևնան, առանձին ցանկություն չունեի բաժանվելու այդ դրամներից. ամեն ամսվա վերջում նրան թվում էր, թե պակասում է հատկապես հենց այդ երկու հարյուր ռուբլին: Սակայն երբ

մի անգամ փորձեց կատեցնել դրամի առաքումը, այնպիսի կատաղի ու վիրավորական սաստ ստացավ սովորաբար հանգիստ ու համբերատար Իվանից, որ այնուհետև այդ պարտականությունը կատարում էր օրինակելի ճշտապահությամբ:

Բանն այն է, որ Իվանի մեջ հայրենի գյուղի հանդեպ բոլոր այդ տարիներին ապրում էր խաղաղ, ոչ այնքան ուժեղ, բայց ծծող մի ցավ: Այդ ցավը տարեց տարի թուլանում էր, իսկ վերջին ժամանակներս ավելի ու ավելի հապավեց էր իրեն սգացնել տալիս. իսկ երբ հոր գալու մասին լուր առացվեց, այն վերածնվեց նոր ուժով, միայն աստիճանաբար վերափոխվելով իր հակադրությանը՝ այն մարդու պսակած հրճվանքին, որը վերստին ձեռք է բերում կորցրած, բայց տակավին թանկագին մի բան:

Այդ շաբաթ Իվանն աշխատում էր առավոտյան ութից, ուստի և կարողանում էր հասնել լուսադեմին ժամանող մոսկովյան գնացքին: Մանուշակագույն կիսախավարում նա սարայից դուրս էր բերում իր «Պրեդան» և գնում կայարան:

Մինչդեռ միայնակ «Պրեդան» անշտապ, այս ու այնտեղ շող տալով գարնանային գուրբերը, մտնում էր գետին, լուսաբացը հետպետե ավելի էր տիրում երկնքին, — ո՛չ քաղաքային արշափույսը, այլ ավելի շուտ ապատ, ընդարձակ, տափաստանային արշափույսը, որ դեռ չի նշմարում, թե ներքևում ոչ թե տափաստան է, այլ քաղաք: Այստեղ թե՛ տները և թե՛ փողոցները, չնայած շատության և բարեկար-

գության, չէին ընտելացել իրենց տեղերին. յուրաքանչյուր տան և յուրաքանչյուր փողոցին կարծես թվում էր, թե նրանք ելրին են, թե նրանցից անսխապես դենը քաղաքի վերջավորությունն է, դատարկ տարածություն. մինչև վերջերս հենց այդպես էլ էր:

Շրջապատը լուսանում էր: Մանուշակագույն կիսամութը չքացավ ինչ-որ տեղ, գոլորշիացավ: Եվ այդ նման էր հսկայական, թեթև մանիշակագույն վաթագույրի ոչ շատ արագ բացվելուն, վաթագույր, որի ետևում երևում է ջերմ դեղին լույսով մեղմ լուսավորված հսկայական, դեռևս ամայի բենը, ուր շուտով տեղի են ունենալու կարևոր իրադարձություններ:

Եվ ահա վերջապես ամենակարևոր իրադարձությունը կատարվում է. երբ մեքենան մոտենում էր գետին, Իվանի տեսողության առաջ բացվում էր գործարանը մյուս ափին: Թվում էր, թե այն եռացող էրաբխային ահռելի տարածություն է, հապճեպ ծածկված քարե պատերով, երկաթյա տանիքով ու հաստ ապակիով, հրակայուն խիցերով ու հրադիմացկուն մետաղով, ծխնելույզների տեսք ունեցող բազմաթիվ արտուղուկներով, որոնց միջով հրաբուխն հնարավորություն ունի, թեկուզ մասամբ, արտաշնչելու իր կատաղության ավելցուկները: Այդ ծխնելույզներից մոլեգնում են ամենաբազմագույն ու բազմերանգ բոցն ու ծուխը: Ահա վառիվայրից ցած է թափվում շիկացած խարամը և նրա հոսող

իրեղեն հոսանքն ստանում է թևերը տարածած մարդու գծագրություն:

Գործարանային հրաբխի կտոր, հալիվ պապիոդ փայլատակումների համեմատությամբ էլեկտրական ուժեղ լամպերը լուսամուտներում, միջանցումներում, սյուների վրա՝ թվում են խամրած ու մեռած, ինչպես լուսատուիկները՝ անտառային հրդեհի համեմատությամբ:

Իվանը ժպտում էր հիացմունքով: Նա չէր դադարում եփանալ իր գործարանով, ուր աշխատում էր արդեն քառորդ դար, ինչպես սլաքավարի երեխաները չեն հոգնում ձեռքները թափահարել գունացքներին, որոնք անցնում են նրանց մոտով ամեն աստծու օր:

Գործարանային պատի երկայնքով, ապա ձախափնյա հին քաղաքի փողոցներով Իվանը մոտենում էր կայարանին: Կայարանի առջև անջատում էր շարժիչը, փակում մեքենան, իսկ ինքը գնում էր դեպի կառամատույցի մուտքը և այնտեղ մնում երկար, մինչև բոլոր ուղևորների ցրվելը, վանելով յուրաքանչյուր ժամանածի, անգամ երիտասարդ մարդկանց: Քսանութ տարվա ընդմիջումից հետո նա դժվարությամբ էր պատկերացնում հորը և, համեմայն դեպս, ուշադիր ու սրտատրոփ դիտում էր բոլոր շքապա, կեպի, ֆուրաժկա դրածներին:

Իսկ հայրը չկար ու չկար: Իվանն արդեն որերորդ անգամ ստիպված էր նստել մեքենան ու ետ գնալ ապարդյուն: Սակայն լարված սպասումը, կան-



խաճաշակոււմը, թե՛ ահա ուր որ է կտեսնի հորը, անհետեանք չէր անցնում: Վերադարձի ճանապարհին նա անընդհատ մտածում էր իր մանկության մասին հայրենի գյուղակում: Սրտում վերստին կսկծում էր վաղուց սպիացած հոգեկան վերքը՝ մեծ տրեխներ հագած փոքրիկ տղայի, որին գեղեցիկ ու անմիտ կնիկը դանդաղ, սակայն համառորեն դուրս էր մղում հայրական տնից: Համարյա նախկին հուսահատ վգացմունքով և բուրժ ֆատալիզմով էր հիշում հոր աղմկոտ հոգոցները՝ կնոջ բացակայության ժամանակ և խղճալի լռութունը՝ նրա ներկայությամբ: Նրա մշուշապատ աչքերի առջև նորից հայտնվում էին մանկության պատկերները. հոր մեծ, ձիու շրթունքների նման փափուկ շրթունքները, երբ հայրը ապուր էր ուտում, անխոս լսելով, թե ինչպես կինը հանդիմանում է դատեր, դատարկ տեղը կաշում որդուն, բղավելով. «Հիմա՛ր, հիմա՛ր Իվանուշկա», ունելիով աղմկում, բարկությունից եփ գալիս: Հիշում է, ինչպես հոգոցներից ու թախտերի ճռճոցից արթնանում էր լուսաբացին և կիսամթնում տեսնում խորթ մոր ճարպոտ, հում սերի պես սպիտակ ոտներն ու հոր նիհար, փայտացած դողացող ոտքերը և, հասկանալով, որ հենց այդ ամենի պատճառով է խորթ մայրը վերցրել իշխանությունը տան մեջ, թախիծով մտածում էր այն մասին, թե ինչպես այդ ամենը, ըստ էության, անհասկանալի է ու սոսկալի: Նա կարծես հարթմնի տեսնում էր ձանձրալի, բայց արտաավելու աստիճան

սիրելի ցածր խրճիթը գյուղակի ծայրին, հենց Վոռո-  
նա գետափի մոտ, և նրա հոգին, ամբողջովին հի-  
շողութուններով կլանված, ասես նորից էին սեր էր  
տածում դեպի այդ խրճիթն ու այդ գյուղակը, ճիշտն  
ասած ոչ թե սեր, այլ խորին հավատի մի պաշտում,  
թե աշխարհի երեսին միայն այդ հյուղակում կարող  
է ապրել Իվան Երանուկը:

Բայց ահա նա կամուրջից անցավ նոր քաղաքը՝  
արդեն աշխուժացած, մարդկանցով և արևով լեցուն:  
Նա անշտապ գնում էր լայն փողոցներով, հրապա-  
րակներով, ուր ամեն ինչ թողնում էր մաքրության,  
նորության և ընդարձակության տպավորություն.  
ուր, ի տարբերություն հակադիր ասի էին քաղաքի,  
չէր պաշտում գործարանային տների մոտիկությու-  
նը, առավոտյան օդը մաքուր էր ու թարմ, իսկ ծա-  
ռերի նոր ընձյուղները վառ-կանաչ էին: Վերջապես  
նա հասնում էր տուն և մեքենան տանում սարայ:  
Այստեղ հիշողությունները թողնում էին նրան: Նա  
անաղմուկ բացում էր դուռը, թեյամանը դնում էլեկ-  
տրասալիկի վրա և հագնում քանվորական պեշաուր:  
Տանը դեռ քոլորը քնած էին, միայն կատուն էր քրն-  
վում սեղանի ոտքին: Բայց շուտով, խոհանոցից  
խշխշոց լսելով, ննջարանից դուրս էր գալիս խալաթ  
հագած, հողաթափերով, կարմրերես, քունը գլխին  
Լյուբով Իգնատևնան: Նրա քայվածքը, խուլ ու  
տնավարի, լսվում էր մեկ այս, մեկ այն տեղից: Տան  
աղմուկները դառնում էին ավելի խառնակ ու բազ-  
մապան—դռների շխկոցներ, պոքանչի՝ Դարյա Ալեք-

սեննայի մանր քայլվածքը, եռացող թեյամանի քլթքլթոցը, ավագ դասեր, լեռնամետալուրգիական ինստիտուտի ուսանողուհի Մարինայի բարձր կոշկակրունկների թխկթխկոցը, որդու՝ իններորդ դասարանի աշակերտ Պետյայի բարձր և ուրախ հորանջը, ապա շվշվոցը, վերջապես շարժունը ձախակողմյան վերջին սենյակում, պի կանչը՝ «Մամա՛», — բոբիկ ոտների թփթփոց, շիթերի չոչոոցը գիշերանոթում—այդ երեք կրտսերներն էին արթնանում:

Մինչդեռ Իվանը կթելեր, նրա կողքով դանդաղ անցնում էր կամ արագ սլանում ընտանիքի մեկ այս, մեկ այն անդամը, բայց Իվանը, ինչպես սովորաբար առավոտյան այդ ժամերին, ոչ մի ուշադրություն չէր դարձնում, լիովին անտեսելով նրանց գոյությունը: Նրանք իրենց հերթին նույնպես կարծես չէին նկատում նրան. այդպես էր սահմանված վաղուց: Ասես նա արդեն այստեղ չէր, այլ գործարանում, դոմենյան վառարանի առջև, արդեն սկսում էր հաղորդակցվել մետաղի ու կրակի գաղտնիքներին, և շրջապատողները հասկանում էին այդ և, անշուշտ, չդադարելով կատարել իրենց առտնին գործերը, հարգալից լռու էին ու որքան հնարավոր է՝ շարժվում անաղմուկ, հենց որ ընկնում էին նրա տեսադաշտը:

Մեկ շաբաթ Իվանը գնում էր կայարան՝ դիմավորելու իր ծերուկին, բայց այնպես էլ չհանդիպեց նրան: Իսկ հայրը հայտնվեց բոլորովին անսպասելի ու հասարակ, և ոչ թե վաղ առավոտյան, այլ ժամը

տասի մոտերքը: Պարզապես դուռը ծեծեց ու բացեց  
ոչ բարձրահասակ մի ծերունի, կարճ, գորշ մորու-  
քով, ձեռքին փոքրիկ կապոց: Մտավ, հարցրեց՝  
այստե՞ղ է ապրում Իվան Երմոլանը և, իմանալով,  
որ այստեղ է ապրում, նստեց ու սկսեց սենյակը  
տնտղել, ինչպես վարպետ-պաստառողը կամ ներկա-  
րարն է պատերը զննում, հաշվելու համար ապագա  
աշխատանքը: Դարյա Ալեքսեևնայի մտքովն էլ չան-  
ցավ, թե դա հենց վաղուց սպասվող հյուրն է. նա  
ծերունուն ասաց, թե տանտիրուհին շուտով կգա,  
ու շարունակեց իր գործը:

Ռադիոընդունիչը խոսում էր կայտառորեն —  
«հատկապես երեխաների համար»: Իսկ երեխանե-  
րը, ի միջի այլոց, գտնվում էին բակում: Էյուբով  
Իգնատևնան գնացել էր խանութ, Պետյան՝ դպրոց:  
Մարինան պատրաստվում էր գնալ ինստիտուտ,  
դռնակի մոտ նրան սպասում էր պողպատահալ Պի-  
մենովի որդին՝ նույն կուրսեցի ուսանող, հավանա-  
բար նաև փեսացուն: Իսկ Իվանն ինքը, որ նոր էր  
վերադարձել գիշերային հերթափոխից, քնել էր, և  
նրա համաչափ խռմփոցը ննջարանից լսվում էր  
այն պահերին, երբ ռադիոընդունիչի կեղծ-կայտառ  
ձայնը ընդմիջում էր տալիս:

Դարյա Ալեքսեևնան, ակնոցավոր փոքրիկ մի  
պառավ, վերջապես ավարտելով առավոտյան տնա-  
յին գործերը, գիրքը ձեռքն առավ ու նստեց բազ-  
մոցին. նա մոլի ընթերցողուհի էր: Կարդում էր  
բարձր շջնջյունով, գրեթե բարձրաձայն: Որոշ ժա-

մանակ անց աչքերը բարձրացնելով, նա տեսավ ծերունուն՝ նստած միևնույն տեղում և մտածեց, որ Լյուքան պետք է արդեն տանը լիներ, քանի որ վարպետ էր կանչել տանիքը նորոգելու: Ծերունու կապոցը Դարյա Ալեքսեանան գործիքների պայուսակի տեղ էր ընդունել:

Ինչպես այդ հաճախ է պատահել պատմության մեջ, ամբողջ խնդիրը լուծեց երեխան: Վեցամյա Ֆեդյա Երմոլանը, բակից վերադառնալով իրեն հարկավոր ինչ-որ առարկայի համար, տեսավ ծերունուն, որը նիրհում էր աթոռի վրա, և մանկական ուղղամտությամբ հարցրեց.

— Պապիկ, ինչո՞ւ ես նստել այստեղ:

Ծերունին ծամծամեց կակուղ շուրթերը, գորշ մորուքը քորեց, ուշադիր դիտեց երեխային և, թշնամաբար աչքը խեթելով շշնջացող ակնոցավոր պառավին, պատասխանեց.

— Հյուր եմ եկել ձեզ, անուշիկս, հյուր... Ի՞նչ քո հայրիկին ճարեիր...

Մեծածակատ Ֆեդյան գլխով արեց. սակայն քանի որ հայրիկը քնած էր, իսկ նրան արթնացնել չէր կարելի, գնաց դեպի դուռը. բայց «պապիկ» և «հյուր» բառերի վուզակցումը Ֆեդյային խիստ նշանակալից թվաց, քանի որ դրանք վերջին օրերին տանը արտասանվում էին անթիվ-անհամար անգամներ: Այդ պատճառով նա, համենայն դեպս, մոտեցավ տատիկին, գլխով ծերունու կողմը ցույց տալով ասաց.

— Պապիկը հյուր է եկել:

Եվ միայն դրանից հետո վազեց բակ:

Այդ բառերը ոչ միանգամից հասան պառավին, իսկ երբ հասան, նա շփոթված նայեց դռան կողմը, ուր տղան անհայտացավ, անպա ծերունուն, որն ասես ննջել էր, գիրքը գցեց բազմոցին և նետվեց դեպի ծերունին:

— Տե՛ր աստված: Դուք... դուք Տիմոֆեյ Վասիլևիչը չե՛ք:

Իրարանցում սկսվեց: Բակից վազելով եկան երեխաները հարևան մանուկների հետ: Միայն վազեց խանութ՝ մոր ետևից: Ֆեդյան նետվեց դեպի հեռացող Մարինան ու ետ բերեց նրան, ի մեծ վիշտ Վիտյա Պիսենովի: Իվանին արթնացրին:

Իվանը ոտաբորիկ ներս ընկավ սեղանատուն, ամուր կրծքին սեղմեց հորը, վրայից հանեց բամբակյա կուրտկան, ոտներից դուրս քաշեց սապոգներն ու տվեց իր տնային փափուկ կոշիկները. պոքանչին օգնեց սեղանը գցելու և հուզված նայում էր, թե ինչպես ծերունին կակուղ շրթունքներն է ծամում ու մի փոքր շփոթված ժպտում:

Տիմոֆեյ Վասիլևիչը գրեթե չէր փոխվել, միայն մազերն ու մորուքն էին փոքր ինչ գորշացել. նա ինքն էլ ամբողջապես գորշացել էր, կորցնելով դեմքի ու վզի այն աղյուսագույնը, որը մանկությունից այնպես լավ էր հիշում Իվանը: Բացի այդ, նա դարձել էր բարեկերպ, կորցրել էր իրեն հատուկ վաղեսի օրերի անհանգստությունը:

Որդուն, իհարկե, չճանաչեց. հետաքրքրությամբ նայում էր նրան, ջանալով մանչուկ Վանյայի հետ դիմագծերի նմանությունն որսալ, և այդպիսի դիմագծեր չգտնելով, անորոշ մրթմրթում էր.

— Ահա և հանդիպեցի՛նք, փառք աստծու...

Իվանը վախենում էր, թե հայրը հինը կհիշի, ներողություն կխնդրի, կպղծա. սակայն ծերունին անցյալի մասին ոչ մի բառ չթոցրեց. ծանրումեծ ողջույն հաղորդեց կնոջից ու երկրորդ ամուսնության Կավակներից, նաև Վանյայի քրոջից, որը տակավին մանկությունից կաղ, այնպես էլ չամուսնացավ և առաջվա պես ապրում էր հոր մոտ: Իվանի հարցին՝ ի՞նչ նոր բան կա գյուղում, Տիմոֆեյ Վասիլևիչը պատասխանեց, թե գյուղում ոչինչ չի փոխվել, ամեն ինչ նույնն է մնացել: Իվանը ծիծաղեց.

— Ինչպե՛ս թե չի փոխվել: Ախր հիմա այնտեղ կոլտնտեսությունն կա:

Ծերունին անտարբեր պատասխանեց.

— Հը՞: Հա, կոլխոպ է... Իսկ դու մի՛թե մինչև կոլխոպը հեռացար: Ճիշտ է, նախքան կոլխոպը...

— Իսկ դու կոլտնտեսությունում որպես ի՞նչ ես աշխատում,— հարցրեց Իվանը:

Ծերունին մռայլ ասաց.

— Ե՛ս: Այնտեղ ես ի՞նչ գործ ունեմ...

— Ո՞նց թե,— Կարնացավ Իվանը:

— Հենց էնպես, ապրում ենք կամաց-կամաց,— խուսափողաբար պատասխանեց Տիմոֆեյ Վասիլևիչը, սակայն անմիջապես էլ, նայելով Իվանին, փութ-

կոտ ավելացրեց.— Դե, պարծենալու առանձին բան էլ չկա...

Այդ ժամանակ վերադարձավ շնչակտուր Լյուբով Իգնատևնան: Ծանոթանալով նրա հետ, ծերունին հավանությամբ գլխով արեց. Իվանի կինը մեծ, հաղթանդամ կին էր, կարմրաթուշ ու կապուտաչյա: Ծերունին հարգում էր փարթամ կանանց: Նա գովեց նաև Իվանի բնակարանը: Ճիշտ է, մտնելով լոգարան, չհասկացավ նրա նշանակությունը. ի վարմանս երեխաների, պարզվեց, որ նա կյանքում լոգարան չէր տեսել: Սակայն նա բավականին շուտ գնահատեց այն: Լողանալով և հագնելով Իվանի ձերմակեղենը, մաքուր ու լուակյաց նստեց սեղանատան լուսամուտի մոտ դրված աթոռին, ամբողջ ժամանակ մնաց այդտեղ նստած, այնինչ ընտանիքի անդամներն ուրախ հուզմունքով պտտվում էին նրա շուրջը, ինչպես արբանյակները մոլորակի շուրջը:

Շուտով խոհանոցից հասան Տիմոֆեյ Վասիլևիչի գալու պատվին երեկոյան տոնի համար պատրաստվող հանդիսավոր ուտելիքների բազմազան ու դուրեկան բոլորերը: Կրտսեր երեխաները—Վերան, Միտյան ու Ֆեդյան—չէին հեռանում պապիկից, նայում էին նրան լուռ, սպասողական, թե իրենց կկանչի, կխոսի հետները: Բայց նա ուշադրություն չէր դարձնում նրանց վրա: Միայն երբ առաջին անգամ երևաց ավագը, իններորդ դասարանցի Պետյան, ծերունին հանկարծ հետաքրքրվեց.



անգամ պարնացած շուռուսուռ եկավ այժոռի վրա. ախր շատ էր նման փոքրիկ Վանյային, միայն թե առանց տրեխների էր, և տնայնագործ վերնաշապկի փոխարեն, վանդակավոր բաճկոնով ու նեղ տաբատով:

Մինչդեռ այդ բոլորը կատարվում էր տանը, Իվանը գնաց գործարան, տուն հրավիրելու ցերեկվա հերթափոխում աշխատող ընկերներին: Հետո եղավ իր այն մտերիմների բնակարաններում, որոնք այսօր գիշերն էին աշխատել: Վերջապես տուն վերադարձավ չափազանց ուրախ ու գոհ, օդու և ջանպայնի մի ամբողջ արկղ մեքենայի ետևի նստատեղին դրած:

Տնով մեկ հյուրեր հավաքվեցին: Այստեղ կային դոմենյան վառարանների վարպետներ, մեծ մասամբ հասակն առած, դրանց թվում փառաբանված Ուլյանովը՝ գեղեցիկ, թռվռուն կնոջ հետ, և էլ ավելի հռչակավոր Գոնչարենկոն, արդեն թոշակառու, բեղավոր, ինչպես զապորոժցի,— Սվիցինի վերջին աշխատակիցներից, որ տակավին հիշում էր Կուրակոյին՝ Կրամատորսկի գործարանից: Նրա հետ էին պառավ կինը՝ ճերմակած, ծանրաբարո, ինչպես պրոֆեսորուհի, և որդին— արձակուրդ եկած մի գնդապետ՝ ջահել կնոջ հետ: Այստեղ կային Իվանովյան վառարանի հնոցապաններ՝ կանանց հետ, երիտասարդ ու համեստ մարդիկ, դոմենյան արտադրության բարձրացող լուսատու ինժեներ Կոլոմեյցևը ու նրա կինը— ժողդատավոր Լիդիա Իվանովնա

Կողմնեցեալն, կուսակցութեան քաղկոմի հրահանգիչ, նախկին դոմենյան Լյոնյա Բաշմակովը և պողպատ ձուլող Պիմենովը՝ կնոջ ու որդու հետ:

Այդ ժամանակ Մարինայի մոտ եկան երկու ընկերուհիներ, որ միասին քննութեան պատրաստովէն, սակայն նկատի ունենալով հատուկ դեպքը, նրանց ևս սեղան նստեցրին, ու նրանք երեքով միասին նստել էին մի անկյունում, մտքով ճախրելով մյուս սենյակում, դեպի դասագրքերն ու ստորակները, իսկ անհանգիստ հինգ զգայարաններով ձգտելով մնալ այստեղ ճոխ սեղանի մոտ, սկսվող զվարճութեան հարբեցնող մթնոլորտում, տղամարդկանց սիրալիր ու երեսնամյա կանանց թթու հայացքների ներքո: Մարինայի կողքին նստեց Վիտյա Պիմենովը. նա չէր ուտում ու չէր խմում, միայն անթարթ նայում էր աղջկան, կարծես առաջին անգամ էր տեսնում նրան:

Սեղանը գեղեցիկ ու առատ էր: Այստեղ շարված էին տարբեր երջիկներ, սառը նախաճաշ, բազմատեսակ պահածոներ՝ թիթեղյա տուփերից դատարկված ճենապակյա ասիսների մեջ, խանութից գընված սառը կապտավուն հավեր, սելդեր, դոնդողած ձկներ և արդեն ճնկված—մայիս ամիսն էր,—բայց դեռ համեղ թթու վարունգ ու խնձորի բռնրվածք:

Սակայն բոլոր ուտելիքների պսակը պելմեններն էին—ողջ Ռուսաստանում հռչակված. ո՛չ այնպիսիք, ո՛չ խանութի ծյուրված, անդուրեկան կարտո-

նատուփերով, այլ ուրապան տնային, տավարի, ոչ-  
խարի ու խոզի մսի ընտրովի խառնուրդից՝ չորս  
տարբեր տեսակ՝ մեծ-մեծ, ինչպես կարկանդակ, և  
փոքրիկ, ինչպես մանկական ականջ, այնպիսիներ.  
ուր ամբողջ բանը խմորի մեջ է, եթերային, հոտա-  
վետ և հալչում է բերանում, իսկ միսը ծառայում է  
միայն որպես համեմունք, և ուրիշները, որոնց ամ-  
բողջ հրապույրը միսն է, նրա չափերի մեջ, նրա  
անբացատրելի հյուսվածության մեջ (բերանդ փա-  
կիր, թե՛ չէ այնտեղից կծորա), իսկ խմորը հենց  
այնպես, տուփիկ է, թաղանթ՝ պարունակության  
համար:

Դարյա Ալեքսեևնան, Լյուբով Իգնատևնան և  
Մարինան տաքացած, կարմրած, լրջացած, իրար  
շատ նման, բայց և շատ տարբեր (կարծես իրենք  
էլ տարբեր տեսակի պելմեններ լինեին), սկսեցին  
պելմեն մատուցել մատուցարան մատուցարանի  
ետևից, և հենց որ մատուցարանները դատարկվում  
էին,— իսկ այդ կատարվում էր շատ արագ,— ան-  
միջապես նոր մատուցարաններ էին բերում ու  
չնստեցին, քանի դեռ ամենաանկուշտ հյուրերը  
չէին փռվել այթոռների մեջքին ուժասպառ երջան-  
կությամբ:

Լյուբով Իգնատևնան և Դարյա Ալեքսեևնան մա-  
տուցելիս հատուկ ուշադրություն էին նվիրում  
Տիմոֆեյ Վասիլևիչին. երբեմն մեկը, երբեմն մյու-  
սը փսփսում էր նրա մեծ, ճերմակած ականջին այս  
կամ այն պելմենի առավելությունը և մի գլուխ նրա

առջև դնում էին պղպեղ, հում սեր, ձուկ, հալած յուղ ու մեծ սրվակով քացախ:

Հյուրերն անվերջ խմում էին եկողի կենացը: Նրա կենացին բաժակաճառեր ասացին ծերունի Գոնչարենկոն, Կոլոմեյցնը, Բաշմակովը, Ուլյանովը և կրտսեր Գոնչարենկոն՝ գնդապետը: Վերջինս նրան ողջունեց համարյա ամբողջ պինված ուժերի անձնակազմի կողմից, որն, ի միջի այլոց, պարճացրեց միսիայն Լյոնյա Բաշմակովին. նա պեկուցող ու դասախոս էր և լավ գիտեր ամեն տեսակ չափապանցությունների արժեքը:

Ծերունի Գոնչարենկոն շնորհակալություն հայտնեց Տիմոֆեյ Վասիլևիչին որդու համար, «որը հանդիսանում է, ինչպես ասաց ծերունին հնավարի, հայրենական մետալուրգիայի վարդը»: Հնոցապանները որոշեցին իրենց «ավագի» հորը վեր-վեր թոցնել, և նա նրանց ուժեղ ձեռքերում վեր էր նետվում մինչև ջահը, ոչ առանց վախի նայելով ապակյա բազմաթիվ կախոցներին:

Ընթրիքից հետո սեղանը հրեցին անկյուն, իսկ աթոռները դասավորեցին պատի երկայնքով: Կանանց աչքերը կրակվեցին: Պատեֆոնը նվագեց: Սկսվեցին պարերը: Միայն գայլի պես քաղցած Դարյա Ալեքսեևնան կտավ սեղանին և սկսեց ուտել արդեն սառած պելմենները, միաժամանակ, չնայած աղմուկին, հնարամտորեն նայելով գրքին:

Սենյակը շատ մեծ չէր, պարում էին իրար քրտվելով, ինչպես ամերիկյան բարում. բայց դա ոչ

միայն ոչ մեկին չէր խանգարում, այլև ավելի էր ուրախացնում բոլորին: Չանց չառնվեցին նաև բաց կատակները՝ ուրիշների կանանց հետ պարողների կողմից՝ չպարող ամուսինների հասցեին, նաև հանդիպակաց սրամտություններ՝ փոխանակված ընթացող կույզերի միջև, «դիտավորյալ» ու «հիրավի» սիրակատակներ: Տիրում էր անբռնապբոս, մտերիմ, բայց ոչ սանձարձակ ուրախություն, ինչպիսին լինում է բոլոր տոնախմբությունները միասին անցկացնող այնպիսի երեկույթներում, որտեղ բոլորը վարժվել են իրար, մեկը մյուսի թերություններն ավելի լավ գիտե, քան իրենը, ամենքը կապված են բազմակյա բարեկամությամբ և փոխադարձ համակրանքով, չբացառելով, ճիշտ է, հեռակա փոքրիկ բամբասանքներն ու բավական չար ծակոցները՝ կատարված վրիպումների առթիվ: Այդ շրջապատում ընկած կողմնակի մարդուն հեշտությամբ կմոլորեցնեին իրեն անհայտ դեպքերի մասին ակնարկները, յուրահատուկ, միայն տվյալ շրջապատին պատկանող խոսքերն ու անվանումները և ընդհանուր արտադրությամբ ու համատեղ ժամանականցկացումով իրար կապված ինչ-որ պայմանական ժարգոնը, որը հասկանալի էր միայն այստեղ և ուրիշ ոչ մի տեղ աշխարհում:

Պարում էին երկար ու ինքնամոռաց: Ինչպես սովորաբար, այստեղ գլխավորում էր Լյուբով Իգնատևնան: Ըստ որում նրա դեմքն արտահայտում էր յուրատեսակ անտարբերություն, որը կազմում է

մագնիտոգորսկյան ամուսնացած կանանց բարձրագույն ջրեղութունը. դա կոչված է վկայելու նրանց մտքերի մաքրությունը, այն, որ նրանց համար գլխավորը պարի մեջ բնավ պարընկերը չէ, տղամարդը չէ, այլ պարն ինքը, որ դա արվեստի մաքրության հարց է և ուրիշ ոչինչ: Թեպետ Լյուբով Իգնատևնան պարում էր առաջին հայացքից անշտապ, զուսպ, անգամ անհետաքրքիր, բայց նրա սահուն շորորը շատ ավելի հզոր ու վտանգավոր էր, քան մյուս պարուհիների վկարթ տրոփապարը. և իրոք, նա պարեց բոլորից ավելի երկար: Երբ մյուսներն արդեն ուժասպառ նստում էին, փռվելով աթոռներին ու բազմոցներին, միայն նա, մեկ էլ պչրոտ Եկատերինա Ստեպանովնա Ուլյանովան, նաև նորեկուհի, գնդապետ Գոնչարենկոյի ջահել կինն էին տակավին ոտքի վրա: Վերջում եկվորուհին էլ ուժասպառ ընկավ բազմոցին, ուղղակի իր ամուսնու թևերի մեջ: Այստեղ փոխեցին ձայնապնակը, հարմոնիկը նվագեց «ռուսականը»: Լյուբով Իգնատևնան և Եկատերինա Ստեպանովնան մեխվածի նման կանգ առան, նրանց աչքերը խկույն դարձան խորամանկ-խորամանկ, ու նրանք նետվեցին պարելու:

Իսկ տղամարդիկ դեռևս ոչ մի կերպ չէին կարողանում «համապատասխանել»: Երբեմն միայն, հաղթահարված ու գայթակղված գարնոշկայի առույգ նվագից, կամ երկու կաքավողուհիներից մեկն ու մեկի շատ ճարպիկ խորամանկությունից ու հա-

մառ հրավերից, տղամարդկանցից որևէ մեկը կրունկներով դոփելով պտտվում էր սենյակում կամ իբր թե հուսահատված, նետվում էր վայրկենական ծնկապարի՝ այնպիսի լարված դեմքով, կարծես ունկընդրում էր՝ չի՞ լավում արդյոք պատասխան պարկը ներքևից, հատակի տակից, կամ թե Երկրի հակառակ կողմից. պատասխան չստանալով, նա հուսախաբ ու ամոթահար, նորից նստում էր բազմոցին, իսկ նրա փոխարեն ցատկում էր մեկ ուրիշը:

Վետո դարձյալ փոխեցին ձայնապնակը. սակայն Եկատերինա Ստեպանովնան այլևս անկարող էր, և միայն՝ Լյուբով Իգնատևնան, հակառակորդուհիների վրա տարած հաղթանակով հպարտ, նորից շունչը պահեց, աչքերը դարձրեց նվաղկոտ ու գնաց շրջապտույտի՝ աուլի աղջկա սահուն ընթացքով: Նրա ետևից կարճ ժամանակով նետվում էր տղամարդկանցից որևէ մեկը. առամների արանքում սեղմելով ճաշադանակի բերանը, նա, ինչպես կապված, գնում էր նրա ետևից: Լեզգիական անսպասելի ծիծաղ առաջացրեց, երբ այն պարեց վեր ցցված քթով և այտուկրոտ, նոսրամորուք դեմքով մի խկական չարաճճի ոռու:

Մարդիկ և սենյակն ամբողջությամբ հետպիտե ստացան նույն այն տեսքը, ինչ որ ճաշասեղանը ընթրիքից հետո, երբ բոլոր ուտելիքները կորցնում են սկզբնական ճոխությունն ու բարետեսությունը. բոլոր սալաթները սվերված են, բոլոր կարկանդակները խածոտված, բոլոր ափսեները ճաշոտված, բո-

լոր սկուտեղները խառնշտված: Այլ խոսքով, սկսվեց խելացի ճարտերի ու լիակատար անմտությունների, բարձրաձայն երգի ու պատճառապուրկ ծիծաղի այն խառնափնթորությունը, այն կիսահարթ բարեհոգի անհեթեթությունը, որը դառնում է յուրաքանչյուր երեկույթի բարձրագույն կետը:

Այդ պայմաններում միայն Դարյա Ալեքսեևնան անփոփոխ մնաց իր դիրքում: Փոքրիկներին քնեցրեց: Մարինային ու ընկերուհիներին կամացուկ ուղարկեց մյուս սենյակը պարապելու (Վիտյա Պիմենովը ծլկվեց նրանց ետևից): Սկսեց դուրս տանել ընթրիքի մնացորդները, որպեսզի թեյասեղան պատրաստի, միաժամանակ չմոռանալով— բարի՞ ռուսական հոգի—սեղանին թողնել չխմված ջրերը:

Դարյա Ալեքսեևնայից բացի, ևս մի մարդ բոլորովին պառտ էր ու յուրջ՝ տանտերն ինքը՝ Իվան Երմոլանը:

Այսօր Իվանը գրեթե չխմեց, չդարձավ, ինչպես սովորաբար, ընդհանուր ուրախության ոգեշնչողը: Լյուբով Իգնատևնայի հետ գույգ չկապմեց «ռուսականը» պարելիս և արժվային սրատեսությանը չհետևեց ընկերների դատարկ ընպանակներին ու ափսեներին: Այսօր նա հանդարտ էր ու լրջախոհ, մունջ ու սիրալիր նայում էր բոլորին և հատկապես իր տնեցիներին: Նա ավելի խստադեմ էր, քան ուրիշ անգամներ. հագել էր նոր, դեռ չհագած, «մշակված» հիանալի բրդյա սև կոստյում: Այդ նոր կոստյումը, որի մասին խոսվում էր վաղուց, բոլորի



վրա տպավորությունն գործեց, մասնավորապես մո-  
դայանոլուի Եկատերինա Ստեպանովնայի վրա. սա  
ամենքի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա,  
որ սևը Իվանի բաց խարտյաշ դեմքին շատ է սա-  
լում, որ նա սև հագուստով որքա՛ն բարեկալմ  
է ու նրբագեղ, և նայում էր Իվանին ավելի գորո-  
վալիր, քան սովորաբար: Կոստյունը դուր եկավ  
նաև Տիմոֆեյ Վասիլևիչին, որը կտորը շոշափելով,  
լեզվով ծպպացրեց:

Իվանը հորից ոչ մի քայլ չէր հեռանում, երբեմն  
մի թևով գրկում էր նրա ուսը, ուշադրությունը  
դարձնում որևէ կատակի կամ վվարձալի պատմու-  
թյան վրա, և նախքան կատակի կամ վվարձալի  
պատմության վրա ծիծաղելը, հարցական նայում էր  
հորը՝ հասկացա՞վ արդյոք, և ինքն էլ սկսում էր  
ծիծաղել ոչ շուտ, քան հայրը կսկսեր ծալտալ, հաս-  
կանալով սրամտության աղը: Իվանը երբեմն վեր  
էր կենում և հոր ուսը թփթփացնելով—իբր, կարճ  
ժամանակով,— դուրս էր գնում սեղանատնից, հենց  
այնպես, խմածների շրջանում լուրջ մարդու հոգ-  
նածությունից: Հարևան սենյակում Մարինան և  
նրա ընկերուհիները քննության էին պատրաստ-  
վում: Վիտյա Պիմենովը, նախօրոք քննությունը  
տված, նստել էր լուսամուտագոգին ու նայում էր  
Մարինային, այդ պահմունքից կտրվելով միայն  
նրա համար, որպեսպի բացատրի անհասկանալի  
տեղերը դասագրքում,— նա գերապանցիկ էր և  
հռչակված իր ընդունակություններով: Եվ վարմա-

նալի ու սրտառուչ էր թվում, թե ինչպես նա մի  
ակնթարթում, միշտ նույն կախարդված տեսքով,  
սիրուց անցնում էր մետաղագիտության:

Տրված ժպտալով, Իվանը հեռանում էր այդ  
սենյակից ու մտնում մյուս սենյակը, որտեղ լայն  
մահճակալին քնել էին երեք կրտսերները: Վալսե-  
րի հնչյունները և ոտների դոփյունի ձայնը գրեթե  
չէին հասնում այստեղ: Իվանը կանգնում ու նա-  
յում էր փոքրիկ գիշերապահալով լուսավորված պա-  
վակներին, և իրեն խոսք էր տալիս, որ նրանցից  
երբեք չի հեռանա, ընտանիքը չի լքի, անհայր չի  
թողնի նրանց. չորս տարի առաջ նա տարվեց գոր-  
ծարանային բուժարանի բժշկուհով, և որոշ ժամա-  
նակ մոտ էր ընտանիքից կապերը խլելուն:

Այսպիսի մի անգամ հայտնվելով քնած երեխա-  
ների մոտ, Իվանն զգաց, որ իրեն համակել է հոգե-  
կան տարօրինակ մի թուլություն՝ հաճելի ու տա-  
ռապանք պատճառող:

Նա սպասեց, մինչև որ այդ տարօրինակ զգա-  
ցողությունը հանդարտվի և վերադարձավ սեղանա-  
տուն: Այստեղ արդեն խաղաղվել էին: Երգասեր-  
ներն առժամանակ հաղթել էին պարասերներին:  
Դատավոր Լիդիա Իվանովնա Կոլումեյցևան գլխավոր  
երգչուհին էր. նրա ձայնը ցածր էր, գնչուական, և  
երգը, չարաճճի թե տառապալից, սապում էր նրան:  
Չարաճճիները նա երգում էր լրջորեն, իսկ տառա-  
պալիները՝ ծիծաղելի ձևով, և, ըստ երևույթին,  
ճիշտն այդ էր: Բոլորը սսկվել էին, անգամ պարու-

հիները: Խելացի Լիթիա Իվանովնան, սակայն, մե-  
նակ երկար չերգեց. շուտով սկսեց հանրածանոթ  
խմբականը, և ամենքի ձայները միացան նրան. ան-  
գամ Դարյա Ալեքսեևնան երգեց. միայն ինժեներ  
Կոլումեյցևը ծերունի Գոնչարենկոյի համար թղթի  
վրա ինչ-որ գծում էր և կամացուկ խորհրդակցում  
էին դամենագործի հետ՝ ինչ-որ «ռացիոնալիպատո-  
րական առաջարկության» առթիվ:

Հետո հյուրերը նստեցին թեյ խմելու խմորեղե-  
նով: Միայն Ուլյանովն ու Բաշմակովը, չցանկա-  
նալով, ինչպես արտահայտվեցին նրանք, «փչացնել  
ճաշակները», այսինքն օղին խառնել թեյի հետ, շա-  
րունակեցին օղի խմել: Եկատերինա Ստեպանով-  
նան գնդապետի հետ սիրալիրություն անելով, բար-  
կությանը խեթ նայում էր ամուսնուն, երբ սա լըց-  
նում էր իր հերթական ըմպանակը: Նրա աշխույժ  
ու շագանակագույն աչիկները մեկ շողում էին ձի-  
թային մեղմ փայլով, մեկ փայլատակում պայրույթով:

Տիմոֆեյ Վասիլևիչը քաշվել էր մի անկյուն և  
մտիկ էր անում ամենքին. ավելի շատ լսում էր, քան  
խոսում, լրջությամբ շոյելով իր գորշ մորուքը: Վար-  
պետ Ուլյանովը բոլորովին բարեկամացավ իր սի-  
րելի ավագ հնոցապանի հոր հետ և, կարգին կտու-  
ցը տաքացած, համբուրվում էր նրա հետ, հյուր  
կանչում իր մոտ և դյուրապագացությամբ հառաչում,  
հիշելով օրվայան գյուղը, որտեղից հեռացել էր երե-  
խա ժամանակ, քառասուն տարի առաջ:

Մարդիկ սկսեցին պակասել: Առաջինը—դեռ կես-

գիշեր չեղած — աննկատելի հեռացան Իվանի հերթափոխի հնոցապանները: Նրանք գրեթե չխմեցին, քանի որ ժամը տասներկուսին պետք է աշխատանքի անցնեին: Իսկ Իվանին ցեխի պետը փոխարինել էր ուրիշ ավագ հնոցապանով, նկատի առնելով ընտանեկան տոնախմբությունը:

Մնացած հյուրերն սկսեցին ցրվել գիշերվա ժամը երկուսից: Ժամը երեքին ամեն ինչ խաղաղվեց: Մինչ Լյուբով Իգնատևնան և Դարյա Ալեքսենևան, լայնաբերան հորանջելով, ամաններն էին հավաքում, հատակը մաքրում, անկողին էին գցում, ծերունին, որի քունը չէր տանում, սկսեց որդուն հարցուփորձել հյուրերի մասին (ովքեր էին, ինչ պաշտոն են վարում, որքան ոռճիկ են ստանում), պզուշությամբ անցնելով կանանց մոլությանը՝ դեպի պարելը «ում հենտ ասես», կշռադատել՝ ավելի լավ չէ Մարինային տալ Գոնչարենկոյի երկրորդ որդուն (սա երեկոյին չկար, բայց հին դամենագործը հպարտանում էր նրանով Տիմոֆեյ Վասիլևիչի մոտ), քան այդ փեսայիկին. փեսայիկի հայրը շատ էր լռակյաց, երևում է ժլատ է, անգամ սեփական տուն չունի, բնակարան է պատեցնում պետական մեծ շենքում:

Իվանը ծիծաղելով պատասխանում էր նրա հարցերին և մեղմությամբ հերքում նրա նկատառումները, միաժամանակ լուռ ուրախանալով, որ ինքը հարապատ հայր ունի, որը ծիծաղելի կերպով ու սիրալիք մտահոգվում է իր գործերով: Իսկ ծերունին

նայում էր արդեն դատարկված, բայց դեռ վարդագույն սփռոցով ծածկված երկար սեղանին, հիշում էր անցած երեկոն ու մտածկոտ ասում:

— Լա՛վ ես ապրում...

Ավելի ուշ, երբ բոլորը պառկեցին ու խաղաղվեցին, Իվանը դուրս եկավ արտամուտք և առժամանակ կանգնեց-մնաց, ըստ սովորության նայելով դեպի գործարան, դեպի նրա վերևում բոցավառվող հրացուլքը: Իվանը վատ պզաց այն բանից, որ հերթափոխն աշխատում է, մինչդեռ ինքն այստեղ է, իր տան շենքին կանգնած. քսան տարվա ընթացքում առաջին անգամն է, որ նա իր բրիգադի հետ չէր: Խանդոտ ու սևեռուն նայում էր դեպի դռմենյան վառարանները, որոնք այստեղից չէին երևում, բայց պզացվում էին կարմիր, նարնջագույն և ոսկեգույն ցուլքերից ու ծխից:

Նա որոշեց վաղն անպայման գործարանը ցույց տալ հորը, ու փորձեց պատկերացնել, թե գործարանն ինչ տպավորություն կթողնի նրա վրա, որը վարժվել է այն դաշտապատկերին, որպիսին մանկությունից հստակորեն հիշում էր Իվանը. գյուղական խրճիթներն իջնում են մինչև գետը, գետից այն կողմ օձապտույտ բլրակներ՝ ծածկված մուգ կանաչ եղևնիների թավուտով: Աջ կողմում անսահման հարթություն է, նրա վրա այս ու այն տեղ գյուղակներ են երևում, իսկ ձախ կողմում ձգվում է սարը, որի ստորոտին մի գյուղ կա և պայծառորեն ճերմակին է տալիս Վասիլի Մեծի ծխական եկեղե-

ցին: Հնում ուխտի էին գնում դեպի նրա սուրբ  
ջրի աղբյուրները:

Այդ հիշողութունն այնքան հեռու թվաց, այդ  
պատկերն այնպե՛ս նման չէր նրան, ինչ այժմ  
Իվանը տեսնում էր իր սոջն գարնանային մթու-  
թյան մեջ, որ մի պահ պագ, թե ինքը մի մարդ չէ,  
այլ երկու՝ այնքան դժվար էր մեկ կենսագրության  
մեջ միավորել այդ երկու տարբեր աշխարհները:  
Եվ այն, որ նրա հայրը՝ Տիմոֆեյ Վասիլևիչ Երմո-  
լանը, ոչ այս ոչ այն, վաղը կհայտնվի Մագնիտո-  
գորսկի գործարանում, նույնպես անհավատալի  
թվաց:

Յերեկվա ժամը տասներկուսին Իվանը, ոչ  
առանց որոշ հանդիսավորության, Տիմոֆեյ Վասիլևի-  
չին նստեցրեց իր կողքին և ուղևորվեց գործարան:  
Ետևում նստեց Դարյա Ալեքսեևնան—նրան անհրա-  
ժեշտ էր գնալ գործարան՝ գրքերը փոխելու ամբողջ  
ընտանիքի համար: Գրքերը, թելով խնամքով կա-  
պած, նա դրեց իր ծնկներին. Իվանը նրան իջեց-  
րեց գրադարանի մոտ և ուղղվեց դեպի գործարա-  
նային վարչություն:

Հոր հետ բարձրացավ անցաթուղթ հանելու:  
Գործարանային վարչության գրեթե բոլոր ծառա-  
յողները ճանաչում էին Իվանին և անվանում Իվան  
Տիմոֆեևիչ: Սրան բարևելով, նրանք միաժամանակ  
ժպիտով նայում էին ընդհանուր պատկերին բնավ  
չապող, սպիտակամորուք ծերունու տոպրակա-  
նման կապովածքին, որն այնպես ոչ-գործնական էր,

ո՛չ-գործուղվածային, ո՛չ-ինժեներային, ո՛չ-արդյու-  
նաբերական: Ծերուկը աչքերը կկոցում էր ու գլու-  
խը չորս կողմը պտտեցնում, կարծես ըստ պարտա-  
կանության, ջանադրությամբ, բայց անհետաքրքիր  
պննելով առաստաղն ու պատերը:

Ոմանք կանգ էին առնում ու հարցնում.

— Հը, հայրդ եկա՞վ:

Իսկ մի քանիսը, Իվանին լավ ճանաչողները,  
մոտենում էին.

— Արդեն եկե՞լ է:

Ու մի փոքր չափազանցված եռանդով սեղմում  
էին ծերունու ձեռքը:

Այն սենյակում, ուր մտան հայր ու որդի անցա-  
թուղթ ստանալու, կարմրաթուշ մի աղջիկ, աչքերը  
բարձրացնելով ու տեսնելով ծերունուն, նախ վար-  
մացավ, իսկ հետո, նկատելով նրա ետևում կանգ-  
նած Իվանին, իսկույն հիշեց ու սիրալիր գլխով  
արեց:

— Այո՛, այո՛... հիմա անցաթուղթ կգրեմ. ինչ-  
պե՞ս են մեծարում ձեզ. Տիմոֆեյ...

— Վասիլևիչ:

Ծերունին բավականությունից շողում էր. գուցե  
նա աղոտ կերպով մտածում էր, թե ահա իրենք որ-  
դու հետ շատ վաղուց ապրում են առանձին, բայց  
ինքը՝ ծնողը, միևնույն է, անտեսանելիորեն Վան-  
յայի հետ է եղել. չէ՞ որ բոլոր այդ անձանոթ մար-  
դիկ Իվանին կանչում են հայրանունով՝ «Տիմո-  
ֆեևիչ»:

Անցաթուղթն ստանալով, նրանք աստիճաններով իջան ցած, քայլեցին միջանցքով և վերջապես հայտնվեցին գործարանի գետնի վրա: Ի միջի այլոց, հայր ու որդի երկար չքայլեցին գետնի վրայով, շուտով ճանապարհը դեմ առավ երկաթյա լայն սանդուխքին, որով նրանք բարձրացան գետնից բարձր սեղադրված ուղեկամրջի վրա և առաջ գնացին: Ներքևում, բավականին խորությամբ, բոլոր ուղղություններով ձգված էին երկաթգծեր, ավտոմոբիլի ճանապարհներ, հաստ ու բարակ խողովակաշարեր: Հեռվում առանձնակի բարձրանում էին հսկացեխերի պատերը, ամենուրեք սուլում էր խողովակներից դուրս պրծած շոգին, այս ու այնտեղ, անըկատելի անցքերից նույնիսկ բոց էր ժայթքում: Չորս կողմից լսվում էր համաչափ փնչոց, անընդհատ համաչափ մի փնչոց, որը երբեմն խլանում էր շչակների ձայնից և հարթակի շերեփների ծանր թակոցներից, որոնց մեջ սառչում էր արդեն կարմրակապտին տվող հրեղեն եփվածքը:

Վերջապես հեռվում, ապա հետպիտեռ ավելի մոտիկ, առաջ գալով ահեղ տեսիլքի նման, նրանց առջև բարձրացավ դոմենյան վառարանների շարքը: Ի վանը կանգ առավ ու ցույց տվեց դրանք հորը, որպեսզի սա հեռվից գնահատի այդ հրեշներին: Դրանք նման էին բազմաշտարակ հսկա գծանավի, իսկ յուրաքանչյուրն առանձին հիշեցնում էր մարսեցու. սակայն, քանի որ ծերունին ոչ մի բանի հետ չէր կարողանում համեմատել — նա գաղափար չու-



ներ ոչ մարտեցիների, ոչ էլ գծանալի մասին, — ապա  
պարզապես վախեցավ:

— Վառարաններ: Ա՛յ թե վառարաններ են,  
հա՛,— վախեցած մրթմրթաց Տիմոֆեյ Վասիլևիչը:

Նա առաջ էլ էր լսել դոմենյան վառարանների  
մասին, բայց այդ բառը ամենատվորական համա-  
դրություններ էր առաջացրել նրա մեջ. նա կարծում  
էր, թե խոսքը ընդհանրապես վերաբերում է ռուսա-  
կան վառարանին, որտեղ շիլայի փոխարեն երկաթ  
են եփում: Ավելի ճիշտ, երբ Վանյան գրել էր, թե  
աշխատում է դոմենյան վառարանների առջև, Տի-  
մոֆեյ Վասիլևիչը մտքում պատկերացրել էր դաշտ,  
խկ այնտեղ, խոտադեպերի նման, ռուսական սպի-  
տակ վառարանների շարքեր՝ վառարանատակերով  
ու այրոցներով, թեթություններով ու ծխնելույզնե-  
րով:

Որդու ետևից երկաթասանդուղքով իջնելով դո-  
մենյան ցեխը, Տիմոֆեյ Վասիլևիչը կախարդվածի  
պես նայում էր դոմենյան վառարանի տարօրինակ  
կորպուսը կապնող հակադական գլանների, կոնուս-  
ների ու պրիզմաների հյուսվածքին ու շարունակ  
փնթփնթում.

— Վառարա՛ն: Համա թե վառարան է, հա՛...

Ներքևում, վառարանի տակ, ուր մարդն առանձ-  
նապես փոքրիկ ու ողորմելի է թվում, նրանք հան-  
դիպեցին ինժեներ Կոլոմեյցևին, որը, ճանաչելով  
նրանց, պայծառացավ: Չանաչով խլացնել ամեն կող-  
մից լավող դղրդյունը, նա բարձրաձայն հարցրեց.

— Ձեր խումարությունը դեռ չի՞ անցել:

Այդպիսի անսովոր պայմաններում սակած սովորական այդ խոսքերը որոշ չափով զգաստացրին Տիմոֆեյ Վասիլևիչին, և նա ժպտաց նույնպիսի մեծալրջությամբ ու քիչ էլ ողորմածաբար, ինչպես երեկ երեկոյան՝ իր կենացը խմելիս:

Երբ Կոլումեյցը գնաց, հորն ու որդուն հրավիրելով իր մոտ գրասենյակ, իսկ երեկոյան շնորհ քերել որպես հյուր,— Իվանն սաաց նրա մասին.

— Լավ ինժեներ է:

— Իսկ դու ինժեներ չե՞ս,— հարցրեց Տիմոֆեյ Վասիլևիչը:

Իվանը ժպտաց.

— Ուզում էի, բայց ուժն չպատեց: Պատրաստություն չունեի: Սկսեցի հեռակա սովորել՝ բան դուրս չեկավ: Տարիքս այն չէ, գլուխս այնքան պարզ չի աշխատում... Հիշողությունս լավ չէ: Մի խոսքով, թողի: Դե ոչինչ, չէ՞ որ բանվորներ էլ են հարկավոր: Դրա փոխարեն աղջիկս ինժեներ կդառնա:

Ծերունին կասկածանքով գլուխն օրորեց. «Բանվոր... Մի տես, թե նրան ամեն տեղ ինչպե՞ս են դիմավորում...»

Դոսենյան վառարանի մոտ, որտեղ աշխատում էր Իվանը, ավագ հնոցապանի հորը նույնպես խիստ սիրալիր դիմավորեցին: Մրից սևացած հնոցապաններն ու գազագործները մոտենում էին նրան, ժրպտում մրոտված դեմքերով և համառորեն ձեռք չէին

տալիս, քանի որ չէին ուզում կեղտոտել պատվա-  
վոր հյուրին:

Հսկայական ջենքում մութ էր ու սուր: Դեղին  
ավազը հարթ փռված էր վառարանի հատակին,  
ինչպես գետափում: Սակայն մարդիկ այս ու այն  
կողմ էին վազվզում, կարծես ինչ-որ բանով շատ  
սթաղված էին, բայց թե հատկապես ինչով՝ ծերու-  
նին չէր հասկանում: Ինչ-որ տեղից հայտնված  
վարպետ Ուլյանովը նույնպես, ոչ երեկվա նման,  
լուրջ էր ու գործնական: Նա բարձրաձայն կարգա-  
դրություններ էր անում, ում-որ խիստ ջշպոեց, և  
դժվար էր նրան պատկերացնել հարբած ու ար-  
տաավող և իր ճարպիկ կնոջից վախեցած ու նրան  
ամեն ինչ ներող: Տիմոֆեյ Վասիլևիչին նա, ի միջի  
այլոց, հանդիպեց բարեկամաբար, տարավ իր սեն-  
յակը, ուր ամենուրեք կախված էին ցնցվող սլաք-  
ներով վահանակներ. հետո կապույտ ակնոց տվեց  
նրան ու տարավ վառարանի մոտ՝ փոքր բացվածք-  
ներից դիտելու ներսում փակված մոլեգնող բո-  
ցերը:

Հետո Ուլյանովը հանկարծ անհետացավ, և Տի-  
մոֆեյ Վասիլևիչն իրեն զգաց միայնակ ու կորած՝  
այստեղ, աշխարհում ոչ մի բանի չնմանվող այս  
պարմանալի կորպուսում: Բայց ահա կիսախավա-  
րից հայտնվեց Իվանը: Նա հորը թևանցուկ արեց  
ու ինչպես երեխայի տարավ ինչ-որ տեղ, նստեց-  
րից մի կողմ և կամաց ասաց.

— Նայի՛ր:

Եվ այստեղ սկսվե՛ց: Խոււիը բացվեց, և շիկացած հեղուկ մետաղը հոսեց վառարանից: Դոմենի մեջ ամեն ինչ մի ակնթարթում կերպարանափոխվեց, դարձավ անտանելի կիպիչ ու անտանելի լուսավոր: Ստվերները կատաղածի պես ոստոստում էին հեռավոր պատերի վրա: Կրակը պայծառորեն լուսավորելով դոմենյան վառարանի բոլոր քունջ ու պուճախները, միաժամանակ հարևան, սրան միացած դոմենը, կարծես ընդլայնեց, ցուցադրեց դրանց իսկական չափերը, ավելի վիթխարի, քան կարելի էր պատկերացնել սկզբում:

Շիկացած հեղուկ մետաղը հարթ թեքությամբ հոսեց ուղղակի հատակի վրայով չգիտես ուր և կարող էր ամեն բան այրել իր ճանապարհին, եթե չի նեին դեղնավապի մեջ մինչ այդ աննկատելի երկայնադրակները: Շիկացած շիթերը հոսեցին առաջ այդ երկայնադրակներով: Վառ կարմիր և ոսկեգույն բոցերը, որ ավելի վարիուրելի էին, քան գեհենի նը, հանկարծ Տիմոֆեյ Վասիլևիչին հիշեցրին Վասիլի Մեծի իրենց ծխական եկեղեցին, որի ամբողջ պատի երկայնքով նկարված էին դժոխքի տանջանքները: Բայց այստեղ կրակը իսկական էր, դիվային. չարքերը, այսինքն հնոցապանները, վազվուլում էին կռաձողերը ձեռքներին, այդ կռաձողերով նետվում ուղղակի կրակի վրա, հեղուկ կրակը բաց թողնելով մեկ այս, մեկ այն երկայնադրակը, և այլևա չէին նկատում ո՛չ Իվանին, ո՛չ նրա հորը, ասես սրանք նրանց համար անձանոթ մարդիկ էին:

Տիմոֆեյ Վասիլևիչը նայում էր շրջապատին՝  
անտոի երկյուղով, և միայն որդու ներկայությունն  
էր հանգստացնում նրան, թեպետ որդին ևս հալոց-  
քի ժամանակ փոխվեց, դարձավ մի տեսակ ոչ-այս-  
տեղացի, հնայված նայում էր կրակին ու մետաղին,  
կարծես մոռացած ամեն բան աշխարհում: Ռսկե-  
փայլ անդրադարձումները թռչկոտում էին Իվանի  
դեմքին, փայլփլում ու խաղում նրա աչքերում:

Կարծես գուշակելով հոր մտքերը, Իվանը շուռ  
եկավ դեպի նա, ուշադիր նայեց նրան ու գորովա-  
լիք ասաց.

— Մի՛ վախենա, ապի՛:

Չգիտես ինչու, հենց այստեղ նա մտաբերեց  
մանկության օրերից խայտ մոռացած «ապի» խոս-  
քը և այդ խանդադատեց նրան: Նա կրկնեց.

— Մի՛ վախենա, ապի՛, կրակը մեր ստրուկն է,  
հաշված ու գծված է գրաֆիկով...

Այդ, իհարկե, ճիշտ էր. սակայն երբ Տիմոֆեյ  
Վասիլևիչը հայտնվեց բարձր հարթակի վրա, որ  
դռնայից տանում էր դեպի լույս աշխարհ, նա ոչ  
առանց վախի նայեց երկնքին՝ իր տեղո՞ւմ է ար-  
դյոք: Երկինքն իր տեղումն էր, այնտեղ, անասելի  
բարձրում, անշարժ քարացել էին փետրաձև ամպե-  
րը: Տիմոֆեյ Վասիլևիչը գաղտուկ խաչակնքեց ու  
հառաչեց: Իվանը նկատեց նրա շարժումն ու ժրպ-  
տաց: Հնում Իվանին բնական թվացող, իսկ այժմ  
գրեթե մոռացված, անսովոր այդ շարժումը այնու-  
ամենայնիվ ինչ-որ բանով, ինչպես «ապի» խոսքը,

հուպեց նրան: Միաժամանակ նա պարմացավ, որ  
հոր կյանքը այդքան քիչ է փոխվել—համենայն  
դեպս արտաքինապես. թվում էր, թե այնտեղ ամեն  
ինչ մնացել է այնպես, ինչպես երեսուն տարի առաջ  
էր, միայն թե սայլի ու բրիչկայի փոխարեն ճանա-  
պարհներով ավտոմոբիլներ են շարժվում: Նա  
մտածեց.

«Շրջա՞նն է այդքան հետամնաց, թե՞ հայրն է  
ամուր կառչել հնից. կամ գուցե այն պատճառով է  
նա կառչել, որ շրջանն է հետամնաց...»

Այդ մասին երկար մտածելու ոչ ցանկություն  
կար, ոչ ժամանակ. օրվա մնացած մասը և հաջորդ  
բոլոր օրերը ամբողջովին անցնում էին հյուր գնա-  
լով, կինո ու մետաղագործների Պալատ հաճախե-  
լով: Իվանի մտքերը մի բանով էին պառկած՝ ինչ-  
պե՞ս ավելի լավ պատվել ծերունուն, ինչո՞վ նրան  
ավելի պարճացնել: Շաբաթ և կիրակի — Իվանի  
բրիգադի հանգստյան կրկնակի օրերը — որոշեցին  
գնալ քաղաքից դուրս ձկնորսության:

Կեսօրվա ժամը երեքին Երմոլանների տան  
առջև կանգնեցին երկու «Պորեդա» և մի «Մուկ-  
վիչ»: Իվանն էլ դուրս բերեց իր «Պորեդան»: Բար-  
ձեցին վրանները, ձկնորսական պարագաները, խո-  
հանոցային իրերենները. հավաքովի նավակի մա-  
սերը և նախապես պատրաստված տախտակի ու  
փայտածոդի կտորները խցկեցին բազաժների մեջ:  
Տիմոֆեյ Վասիլևիչը տարակուսանքով էր նայում  
այդ տախտակներին ու փայտածոդերին, մինչև որ

նրան պարզաբանեցին, թե տափաստանում վառե-  
լիք չկա, այդ պատճառով ստիպված են հետները  
վառելիք վերցնել՝ խարույկի համար, որի վրա  
ձկնապուր պիտի եփեն: Անտառապատ վայրերի  
բնակիչ Տիմոֆեյ Վասիլևիչին դա շատ ծիծաղելի  
թվաց՝ հետները վառելիք վերցնել, — ու նա առաջին  
անգամ այդ բոլոր օրերին բարձրաձայն ծիծաղեց, և  
բոլորը տեսան, որ որդին շատ նման է նրան:

Իվանն իր մեքենան քշեց այդ ամբողջ փոքրիկ  
ավտոշարասյան գլուխն անցած: Իվանի հետ մեքե-  
նայի մեջ էին Տիմոֆեյ Վասիլևիչը, Լյոնյա Բաշմա-  
կովը և գնդապետ Գոնչարենկոն՝ այս անգամ ոչ թե  
պինվորական համապզեստով պճնված, այլ քաղա-  
քացիական շորերով, հավանորեն հոր կոստյումով,  
եին շքապայով ու ծնկից բարձր որսորդական եր-  
կարաճիտ կոշիկներով: Մյուս մեքենաներով գնում  
էին նրանց տերերը՝ ինժեներներ Կոլումեյցևը,  
Լապինը և հնոցապան Սինիչկինը, յուրաքան-  
չյուրն իր մտերիմների հետ: Կանայք չկային.  
ձկնորսությունը համարվում էր հույժ տղամարդկա-  
յին գործ, նույնիսկ ավելին՝ կանանց հասարակու-  
թյունից դուրս տղամարդկանց երկարատենչ հան-  
գիստ: Ընտանիքի հարգարժան հայրերն այստեղ  
իրենց պզուս էին ինչպես դասից փախած դպրոցա-  
կաններ, և հակված էին — լիակատար պզացողու-  
թյան համար — մեծապես չափապանցելու իրենց  
տնային դժվարություններն ու կանացի բնավորու-  
թյան թերությունները:

Շուտով մեքենաները հայտնվեցին տափաստանա-  
նում, ոչ շատ որոշակի տափաստանային ճանա-  
պարհի վրա, պատրաստված ավելի շուտ բարեհաճ  
վարորդների կողմից, քան ճանապարհաշինարար-  
ների ջանքերով: Բավական ամառի, միապաղաղ,  
ալիքավորվող հարթավայրը յոթմղոնանոց քայլերով  
ընդառաջ էր գալիս և, հեռվից շրջանցելով մեքենա-  
ները, ծուլորեն սողում էր կարծես ոչ թե ետ, այլ  
դեպի առաջ: Միակ հիշարժան բանը ճամփին, որի  
վրա Լյոնյա Բաշմակովը հրավիրեց Տիմոֆեյ Վասի-  
լևիչի ուշադրությունը, լքված ոսկեհանքն էր՝ մի  
քանի խարխլված փայտյա շինություններով: Տիմո-  
ֆեյ Վասիլևիչը, ամբողջ կյանքը Եվրոպական Ռու-  
սաստանում ապրած մի մարդ, որտեղ անմիջապես  
գետնի տակից կամ գետից հանած բնական ոսկու  
մասին միայն առաքալելներ էին շրջում, հարցակոխ  
արավ Լյոնյային, թե ինչո՞ւ են հանքը լքել, այնտեղ  
ոսկի մնացած կլինի՞ արդյոք, և գլուխն անընդհատ  
ջարժելով նայում էր հին շինություններին:

Լյոնյա Բաշմակովը լավ ճանաչում ու տիրում էր  
այս վայրերը և, չնայած դաշտանկարի միապաղա-  
ղության, հնարքը գտավ դրանց մասին պանազան  
պատմություններ անել: Մտան մի գյուղ, և Լյոնյան  
ասաց, որ դրա անունը Տրեբիա է. այն կոչել են  
խոալական մի գետի անունով, որտեղ մեկուկես դար  
առաջ Սուվորովը ջարդեց գեներալ Մակդոնայդին  
(«Հետագայում նապոլեոնյան մարշալին ու Տա-  
րենտյան դուքսին», — Գոնչարենկոյին դառնալով,



ծանրակշիռ նեւեց Լյոնյան) : Ընդհանրապէս այս-  
տեղ օտարերկրյա անուններ շատ կային : Մոտեր-  
քում էր գտնվում Փարիզ գյուղը, Տեր-Շամպենուապ  
ավանը, Նավարին ու Բալկաններ գյուղերը. այդ-  
պէս էր պահպանվում ռուսական կորքերի հաղթա-  
նակների հիշատակը, որոնց մեջ աչքի էին ընկել  
նաև ուրալյան կապակները :

Բայց ահա մեքենաները դուրս եկան մի փոքր  
բարձրության կատարին : Աջից ներքև, մացառուտ-  
ներում, հանկարծ երևաց գետի ոլորապտույտ ար-  
ծաթագույն ժապավենը : Մեքենաները երկար  
պտտվեցին նրա ափերով և վերջապէս կանգ առան  
մի հանդարտ գետախորշում : Չկնորսներն սկսեցին  
տեղավորվել. նրանք մի փոքր հուլված էին և մի  
գլուխ ազահաբար ու հարցական դիտում էին գետի  
առեղծվածային-խաղաղ հայելին : Աշխատում էին  
արագ ու ճարպիկ, երևում էր, որ ամեն բան առա-  
ջուց մտածված ու հաշված էր. մի քանիսը վրան-  
ներն էին խփում, ոմանք ցանցերն ու այլ պիտույք-  
ներն էին իջեցնում, մյուսները անցան կարգի բե-  
րելու հավաքովի նավակը, որը տրամվայի նման  
ներկված էր կարմիր լաքով : Դա բարդ ու ջանադիր  
աշխատանք էր, բայց շուտով նավակը սահեց գե-  
տածոցում, ինչպէս կարմիր ձկնիկ : Նրա մեջ նըս-  
տեցին Լյոնյա Բաշմակովը և Սինիչկինը : Նրանք  
ցանցեր դրեցին տարբեր տեղերում : Ինչ-որ մեկը  
որդեր էր հավաքում, մեկ ուրիշը՝ կարթերը : Կոլո-  
մեյցևը գնդապետ Գոնչարենկովին վերցրեց ռետինե

փշովի իր նավակը և միասին նավեցին ավելի հե-  
ռու ինչ-որ սեփական արգելատեղում ցանցեր դնե-  
լու: Վերադառնալով, նրանք Լապինի հետ միասին  
սկսեցին նախաձաշիկ պատրաստել, հասկանալի է,  
առայժմ ոչ ձկնապուր,— ձուկը տակավին գտնվում  
էր կոճղերի արանքում, հատակի խոռոչներում,  
քավում էր ջրիմուռներին, պտտվում գետափոսերում,  
պոչն էր թափ տալիս, լողաթևերն էր շարժում,— այլ  
տնային մթերքներից, որ պատրաստել ու փաթեթա-  
վորել էին նույն այն կանայք, որոնց մասին այստեղ  
այնպես բարձրից էին խոսում:

Իվանին այսօր չթողեցին մասնակցելու ընդհա-  
նուր ջանքերին, նրա ձեռքից խլեցին ամեն բան, և  
նա նստեց հոր հետ գետափին, բացատրելով նրան,  
թե ով ինչ է անում, ինչպես էքսկուրսավարը՝ աչքի  
ընկնող օտարերկրացուն: Տղմային պոփություն էր  
փչում, և Իվանը հիշեց Վոռոնա գետակն ու մեծ  
լաստը:

Գործերն ավարտելով, բոլորը հավաքվեցին խո-  
տի վրա փռած քառակուսի բրեզենտի շուրջը: Աղոտ  
ծիածանի բոլոր գույներով փայլում էին պլաստ-  
մասսայե ընպանակներն ու ափսեները, դրված էին  
սելդերով, երշիկով, տապակած կոտլետներով և խա-  
շած մսով պնակներ ու մանանեխի շատ ամաններ  
և, որպեսզի չհարբեն, ընդամենը երեք շիշ օղի:  
Մաքուր օդում, աշխատանքային գործերն ու ամեն  
հոգս մոռացած, բացի մի բանից, թե ինչ է կատար-

վում ջրի տակ, — արդյոք ցանցում ձուկ ընկնո՞ւմ է,  
— դա մի սքանչելի ճաշ էր:

Ճաշելուց հետո ոմանք հենց այդտեղ խոտերի վրա քնեցին և միայն ամենամոլի կարթ գցողները ցրվեցին տարբեր տեղեր ու կարթերը ձեռքներին նստեցին լուռ ու համբերությամբ, բայց հոգու խորքում լի ապարտով և ինչ գնով լինի մրցակիցներին գերապանցելու ցանկությամբ: Տիմոֆեյ Վասիլևիչին նույնպես կարթ տվին, և նա, փորձված աչքերով պնտելով գետափը, իր համար ընտրեց սյուսներից հեռու հանդարտ մի տեղ ու նստեց կարթորսի: Օերունին ամոթով ջմաց. նա բոլորից շատ պերկես որսաց, բռնեց նույնիսկ մի ծածան ու մի գալլա-ձուկ:

Մութն ընկնում էր: Կարթ գցողները հետպհետե վերադարձան մեքենաների մոտ: Քնածներն արթնացան: Մեծ խարույկ վառեցին: Սկսեցին կարտոֆիլ մաքրել: Մոտենում էր «գեղարվեստական մասր», ինչպես այն անվանեց Լյոնյա Բաշմակովը: Նա և Սինիչկինը կարմրագույն նավակով ուղևորվեցին ստուգելու մոտակա ցանցերը և շուտով բերեցին, ընդհանուր ցնծության տակ, կես դույլ թափուացող ձկներ: Տեղն ու տեղը ձեռնարկեցին «մեծ ձկնապուր» պատրաստելու գործին. սկսեցին մաքրել, արնոտած դանակներով կտրատել ձեռքի մեջ դեռևս թափուացող ձուկը և գցել եռացող ջրի մեջ գլուխ-սոխերի և կարտոֆիլի շերտերի հետ միասին, գդալով քաշելով եփվող ձկնապուրի երեսի քափը: Միա-

ժամանակ ամենքը մտահոգ էին ու հպարտ, և ասում էին, թե մի՞թե տանը այսպիսի ձկնապուր կեփես, և որ առանց կանանց այն մի տեսակ ավելի համեղ է, և իբր իպուր չէ, որ լավ խոհարարները տղամարդիկ են, թե եփել-թափելն այնքան էլ դժվար գործ չէ, ինչպես սիրում են պատկերել կանայք: Ու թեպես բոլորն էլ հոգու խորքում հիանալի գիտեին, որ բոլոր այդ խոսակցությունները լույ կեղծիք են, բայց դե այդպիսին է ձկնորսության ժամանակ լավ տոնը:

Երբ գլուխ-սոխերի ու կարտոֆիլի հետ կաթսայի մեջ ձուկը եռաց, Կոլոմեյցնը և Լապինը գնացին դեպի մեքենաները և այնտեղից բերեցին մեծ ծրարներով սև տաքդեղ ու դափնետերև: Նայելով նրանց հանդիսավոր, երկյուղած դեմքերին, պատմաբանը կարող էր վերջապես հասկանալ, թե ինչու էր մարդկությունը այնպես ծարավի համեմունքների, որ դրանց ետևից ընկած, հայտնաբերեց Ամերիկան:

Ձկնապուր կերան այս անգամ կարգին խմելով: Եվ ահա երկնքում երևաց նորալուսինը, գետախորշըն արծաթին տվեց ու նրա շրջակա թփուտներում աղմկեց հովիկը: Իսկ տափաստանը փռվել էր լայնարձակ ու անսահման. խարույկը շրջապատած մարդիկ ու մեքենաները նրա վրա գցում էին տարօրինակ, անհանգիստ սուվերներ: Մոտերքում կըռկըռում էին գորտերը:

Ուշ գիշերին, երբ դեռ չէին քնել միայն ամենա-

անդադարները, տափաստանի հեռվում երևացին երկու լուսատու անձքեր, և շուտով ձկնորսների ճամբարին մոտեցավ ևս մի մեքենա՝ բեռնատար: Նա կանգ առավ ոչ հեռվում, և նրա լապտերներն իսկույն հանգցրին: Խոտերի վրա լավեցին անշտապ, հանդարտ քայլեր: Շուտով լուսավորված շրջանը մտան երեք տղամարդ: Չննելով նրանց, ձկնորսները գետափը թնդացրին ուրախ կանչերով: Դրանք նույնպես թունդ ձկնորսներ էին՝ սովխոսի դիրեկտոր Կանուննիկովը, պօստեխնիկը և դիրեկտորի վարորդը:

— Վաղուց չէիք երևում, — խոսեց Կանուննիկովը, ձեռքերը տաքացնելով խարույկի վրա:

— Ժամանակ չէինք գտնում, — սկսեց արդարանալ Իվանը: — Հարկավոր է պլան կատարել: Ամիսը վերջանում է: Այսօր մի կերպ ձկնորսության դուրս եկանք, այն էլ հատկապես ի պատիվ իմ հյուրի: Հայրս է եկել... Վաղուց չէինք տեսնվել, քառորդ դար ու մի բան էլ ավելի... Նա հայտնի ձրկնորս է: Հիմա քնած է վրանում, հոգնել է:

Նորեկներն սկսեցին շնորհավորել Իվանին: Նա ամոթխած շնորհակալություն հայտնեց նրանց:

Տիմոֆեյ Վասիլևիչը, ի միջի այլոց, քնած չէր: Նա հաճույքով լսեց ամբողջ խոսակցությունը: Այն, որ սովխոսի դիրեկտորը Իվանի հետ խոսում էր առանց ձևականության, անգամ հայցողաբար, ջոյեց ծերունու տոհմական հպարտությունը և փոքր-ինչ պարմացրեց նրան: Դիրեկտորը Իվանին գանգատ-

մեց պակասություններից ու խնդրեց փականագործներով օգնել կահույքը նորոգելու:

Պարսկումի հանձնարարությամբ Իվանը կբաղվում էր շեֆական աշխատանքով, իսկ դոմենյան ցեխը շեֆն էր խոպանի այն սովխուպի, որի դիրեկտորն էր Կանուննիկովը: Սակայն ծերունին չէր հասկանում այդ փոխհարաբերությունները: Վրանի անցքից նա լարված ու հարգալիր նայում էր խարուկով լուսավորված իր որդու լուրջ դեմքին, ճիշտ այնպես, ինչպես այնտեղ՝ դոմենի մոտ, և փնթփրնթում էր.

— Իվանուշկա: Ա՛յ քեզ Իվանուշկա-հիմարի՛կ...

Նա չվազում էր դուրս գալ վրանից՝ մի քիչ տաքանալու փառքի ճառագայթներով և խարուկի ջերմությամբ: Դիրեկտորի ներկայությանը նա որդուն անվանեց Իվան Տիմոֆեևիչ և հետո արդեն այլ կերպ չէր կանչում, որով Իվանին ջիղթության և անհանգրստության մեջ գցեց:

Հաջորդ ամբողջ օրը ձուկ էին որսում, թրևում էին գետափին, նախաձաշում, ալարկոտ պատմում եղած ու չեղած բաներ: Արևի ոչ ջերմ ճառագայթները, ջրի վրա թրթռացող լուսավոր թելերը, տափաստանային բարձր խոտերի խճճվածքը, թռչունների անվերջ երկարող ծվլոցը ու բլեպների տպոցը—այս բոլորը, ասես, մարդկանց շուրջը հյուսել էր երանելի պարապության թելի ու խաղաղ մի ցանց: Դրանից այնքան էլ հեշտ չէր դուրս պրծնե-

ը, և կանքի որոշ լարում պահանջեց, որպեսզի օրվա վերջում կարողանային հավաքել, տեղավորել, հագնվել ու վերադառնալ առօրյա կյանքի սրընթաց մտքերին:

Ճամփա ընկնելուց առաջ նախաձաշեցին: Նորից խմեցին Տիմոֆեյ Վասիլևիչի կենացը: Խորամանկ Կանուկնիկովը, որ չափազանց շահագրգռված էր Իվանին գրավելու և դոմենյան ցեխից անհրաժեշտ օգնություն ստանալու, տեսնելով հոր նկատմամբ անվանի դոմենագործի աչքերում այնպես շողացող սերը, աղմկոտ վեղումներ ու գովասանքներ չխնայեց: Ի միջի այլոց, նա ինքն էլ սրտաշարժվեց, տեսնելով մաքուր ու սրտառուչ որդիական սերը. հիշեց շատ ծերացած, Սիմֆերոպոլի ծայրամասային փոքրիկ տնակում ապրող իր ծնողներին, և որոշեց հենց այդօր նամակ գրել նրանց: Նա հավվադեպ էր նամակ գրում:

Կենդանի ձկները թփրտում էին դուլլերում ու պանքյուղներում: Դրանք հավասարապես բաժանեցին իրար մեջ: Առավոտվանից թունդ խմած Սինիչկինը հանկարծ սկսեց կուրծք ծեծել ու գոռալ, թե ինքը մանկուց եղել է անապաստան, հիմա էլ տուն չունի, ո՞ւմ համար տանի ձուկը, և թող իր բաժինը վերցնեն գրողի ծոցը: Վերջերս կինը հեռացել էր նրանից, և ձուկը բաժանելիս նրան առանձնապես անտանելի թվաց այդ: Նա սկսեց գրկել Տիմոֆեյ Վասիլևիչին, նրան հայրիկ կոչել ու զանգառովել նպովալ կյանքից, հավանաբար կարծելով, թե շատ

քան տեսած ակտի մարդը իրեն ավելի լավ կհասկանա, քան ուրիշները:

Սինիչկինին հանգատացրին, նրա փոխարեն ավտոմոբիլի դեկի մոտ նստեց գնդապետը, և մեքենաները սլացան դեպի տուն հապիվ նշմարվող տափաստանային ճանապարհներով:

Որոշեցին ուրիշ մարշրուտ ընտրել, որպեսզի Կանուննիկովին ուղեկցեն մինչև սովխոս: Տափաստանը փոխվեց դյուլթիչ անկարգությանը կանգնած գունատ-կանաչ կեչու պուրակների: Հարթ, միապաղաղ տարածություններից հետո, այդ կանաչ պուրակները ուրախացնում էին մարդու հոգին, և կապույտ երկինքը նրանց վերևում կարծես ավելի պայծառ ու պարզ էր, քան դեղնա-դարչնագույն տափաստանի վերևում:

Սովխոսը բոլորովին նոր էր: Սպիտակ սվաղած տնակները, ինչպես և սպիտակ երկարավուն ու բուրբակ տնտեսական շինությունները — այդ ամենը ջլացուցիչ էր: Կարծես այստեղ կռվերն ու ոչխարներն էլ նոր էին: Դեռ չկային ոչ ջներ, ոչ կատուներ: Եվ մարդիկ բոլորն էլ ջահել էին: Հավանաբար այս վերջին պատճառով անցորդները՝ բամբակյա նոր կուրտկաներով պատանիներ ու աղջիկներ, այնպիսի հետաքրքրությամբ էին նայում Տիմոֆեյ Վասիլևիչին, երբ նա անցնում էր ավանի փողոցներով իր միակալե մոխրագույն կոստյումով, ամբողջ ժամանակ դիրեկտորի հետ կողք կողքի...

Մագնիտոգորսկ հասան ուշ երեկոյան: Բոլորն



էլ, քացի վարորդներից, քաղցր քնել էին, այնպես որ նույնիսկ հարկ չեղավ հրաժեշտ տալու: Քունը գլխին Տիմոֆեյ Վասիլևիչին Իվանը անկողին դրեց շորերով, միայն կոշիկները հանեց: Լյոնյա Բաշմակովը մնաց քունն առնելու Իվանի մոտ. նրա համար անկողին գցեցին սեղանատանը: Որսաձկան երմուխանյան բաժինը լցրին մեծ կոնքի մեջ, Լյոնյա Բաշմակովի բաժինը՝ դուլի:

Իվանը պառկեց կնոջ կողքին և շշուկով, որպես-  
պի ոչ ոքի չարթնացնի, երկար պատմեց ձկնորսու-  
թյան, համակրելի Կանուկնիկովի ու նոր սովխովի  
մասին, թվեց բռնած բոլոր ձկնատեսակները և  
դրանց մոտավոր քաշը:

Ամուսինների մեջ խոսք բացվեց Տիմոֆեյ Վասի-  
լևիչի առաջիկա մեկնման մասին և այդ կապակցու-  
թյամբ նրա ու տնեցիների նվերների մասին: Հաս-  
կանալով, որ Իվանը չի ուզենա «սներես լինել»,  
Լյուբով Իգնատևնան, իբրև խելացի ու խորամանկ  
կին, որը հասկանում է, թե ինչպես խաղաղություն  
ու համաձայնություն պահպանի ընտանիքում, նա-  
խաձեռնությունն իր ձեռքն առավ ու առաջարկեց  
գնել և Իվանի խորթ մորն ուղարկել մի սփռոց, վե-  
րարկուացու բրդյա կտոր ու մորթյա օձիք, քրոջը՝  
ամառային զգեստ և ձմեռայինի համար կտոր, Տի-  
մոֆեյ Վասիլևիչի երկրորդ ամուսնությունից ծնված  
պավակներին—դրանք չորսն էին—կոշիկներ, տա-  
բատներ և նույնպես զգեստներ, և էլի ինչ-որ քեռու  
և երկու հորաքույրների, որոնց մասին ծերունին

ավելի հաճախ էր հիշում, — երկարաձիտ կոշիկներ  
ու մեկական գլխաշոր:

Անձամբ Տիմոֆեյ Վասիլևիչին հարկավոր էր  
առանձնապես թանկագին նվեր մատուցել, և Իվանը  
Լյուբով Իգնատևնայի հետ երկար մտածեց դրա  
մասին: Լյուբով Իգնատևնան վախենում էր ավելի  
էժան առարկայի անուն տալ, որ չդիպչի Իվանի որ-  
դիական պացմունքներին և ժլատի ու ամուսնու  
հարապատների նկատմամբ չարականի անուն չը-  
վաստակի. միաժամանակ չէր ուզում չափից ավելի  
առատաձեռն լինել: Առանց այդ էլ ստիպված էին  
նվերների և այլ ծախսերի համար մեկ ու կես հա-  
պար ռուբլի խնդրել Ուլյանովներից — իրենց խնայո-  
ղությունները կարող էին չբավականանալ: Եվ նա  
աչքի տակով նայելով ամուսնու մտածկոտ կիսա-  
դեմին, առույգ ձայնով բայց և ոչ առանց հույսի, թե  
ամուսինը կհակառակի իր առաջարկին, բացական-  
չեց.

— Արի քո նոր կոստյումը նրան տանք: Ոչ-  
ի՛նչ... Կապրենք, ուրիշը կառնենք:

Իվանին նոր կոստյումը շատ էր դուր գալիս, և  
կնոջ այդ կոստյումից այդքան դյուրին հրաժարվելը  
նրան դիպավ. նա ոչ առանց հիմքի ենթադրում էր,  
որ կինը այդպես թեթևությամբ կոստյումը տալիս է,  
որովհետև երեկույթին Իվանը նրանով շատ դուր  
եկավ Եկատերինա Ստեպանովնա Ուլյանովային:  
Լյուբով Իգնատևնան փոքր-ինչ խանդում էր նրան  
դեպի իր սիրառատ բարեկամուհին: Բայց ի՛նչ կա-

րող ես ասել, հիանալի նվեր էր. կոստյունը ծերունուն էլ շատ էր դուր եկել. բացի դրանից, այդպիսի նվերը մի տեսակ դրամ չարժէր. նրա համար թեպէտ շատ էր վճարված, բայց վաղուց:

— Լավ, Լյուբա, կեցցե՛ս,— ասաց Իվանը հաշտարար եղանակով և շոյեց նրա փարթամ, սպիտակ ուսը: Իսկ կինը, այդ փաղաքշանքից ուրախացած ու գովեստից շոյված, հոգում վերջնականապէս հակվեց Մարինային ու Միտյային ձմեռային վերարկու գնելուց հրաժարվելու անհրաժեշտութեան առջև:

Իվանն ու կինը, իրարից գոհ, քնեցին երջանիկ քնով:

Առավոտյան Իվանը գնաց գործարան, իսկ Տիմոֆեյ Վասիլևիչը, արթնանալով, խումարութեան դեմ խմեց վարունգով աղաջուր, որ նրան տվեց սրտացավ Դարյա Ալեքսեևնան: Ծերունին հարցրեց, թե որտե՞ղ է այստեղի եկեղեցին, և արդյոք նա չի՞ պատրաստվում առավոտյան պատարագի գնալ — այսօր համբարձման տոնն է, զատկից քառասուն օր անց: Դարյա Ալեքսեևնան զուսպ ժպիտով պատասխանեց, որ իր հանգուցյալ ամուսինը, որն աշխատում էր Ջլատոտեստի գործարանում որպէս ձուլող, հին անասոված էր, աստժուն չէր հավատում և իրեն էլ նույնը պատվիրեց. այնպէս որ ինքն արդեն երեսուն տարի է, ինչ եկեղեցի չի գնում:

Այնուհանդերձ նա Տիմոֆեյ Վասիլևիչին ուղեկցեց մինչև տրամվայ, նստեցրեց և բացատրեց, թե

ինչպես ամբողջ քաղաքի միջով հասնել եկեղեցի:

Մինչդեռ նա կգնար եկեղեցի, ամեն բան արվեց  
— փոխ դրամը վերցվեց, գնումները կատարվեցին,  
որոշված օրվա համար տոմսը գնվեց:

Իր ժամանակին հայտարարված հրաժեշտի երե-  
կույթը, ինչպես դիմալորմանն էր, անցավ նույնպես  
ուրախ ու աղմկոտ: Ճանապարհելու առավոտյան  
ծերունուն հանձնեցին նվերները: Ծերունին կար-  
ծես այնքան էլ չզարմացավ, միայն սսկվեց, աչքերը  
դարձան փո՛քր-փոքր: Նա դանդաղորեն, կարծես  
անվստահ, մեկ-մեկ վերցրեց իրերը և, լսելով, թե  
ունն են դրանք պատկանում, մի պահ մտածում էր,  
գնահատելով մարդուն և նրա համար նախատես-  
ված իրերի արժանիքները: Եվ երբ բոլոր նվերները  
դասավորվեցին, ծերունին հանկարծ աչքի տակով  
նայեց որդուն ու հարցրեց.

— Դու, Վանյա, էն... ինչքա՞ն ոռճիկ ես ստա-  
նում:

Իվանը, հպարտ և զգացված, առարկեց.

— Ոչինչ, ապի... Մի՛ անհանգստանա... Բավա-  
կանացնում է, ապի:

Իսկ Լյուբով Իգնատևնան, ճանապարհի համար  
ծերունուն դրամ տալով, նույնպես զգացվեց և, շունչ  
առնելով, թեպետ որոշ լարվածությամբ, սիրալիր  
ասաց.

— Չե՞լ կուղարկենք նաև երկու հարյուրական  
ռուբլին...

Այդ ժամանակ ծերունին նայում էր մի կողմի

վրա և արագ-արագ աչքերը թարթում: Չէր հասկացվում՝ պատրաստվում է լա՛ց լինել, թե՞ ինչ-որ բան է ուզում ասել: Եվ ամբողջ տեսքն էլ մի տեսակ տարօրինակ էր՝ ոչ այն է փքված, ոչ այն է խղճալի:

Եվ ահա մի անգամ առավոտյան երեխաներն արթնանալով, չտեսան պապիկին: Նա մեկնել էր գիշերը, երբ նրանք քնած էին: Դրա փոխարեն նրանց մոտ ավելացավ ևս մի խաղ՝ նրանք որոշեցին «պապիկ» խաղալ, և այն դարձավ նրանց ամենասիրած խաղերից մեկը: Սովորաբար Վերան էր պապիկ դառնում. նա կպակին կայցնում էր հայրիկի մոխրագույն մորթյա հին գլխարկից մի կտոր, լուրջ ու պաշտոնական նստում էր աթոռին, ձեռքին ըմպանակ, և մյուս երեխաները իրենց ձեռքի ըմպանակներն ու բաժակները չխկացնում էին նրա ըմպանակին ու կենաց ասում. իսկ Տեղյան, ներկայացնելով գնդապետին, — նա ձարել էր թղթե կարմիր ուսադիրներ, — ձառ էր ասում ու բղավում «ուռա՛»: Հետո «պապիկը» գործիմացաբար նրանցից ստանում էր նվերներ, արագ թաքցնում ճամպրուկի մեջ, հարցնում էր՝ ով որքան ռոճիկ է ստանում ու խոստանում էր նամակ գրել: Հարևան երեխաներն էլ էին տենչում մասնակցել այդ խաղին, բայց արդարացիության բնածին պզացմունքից, թե ինչ, չէին համարձակվում ինքնուրույն կերպով խաղալ, այլ անպայման գալիս էին Երմուլայի երեխաների՝ պապիկի օրինական թոռների մոտ, կատաղորեն չխկացնում էին Վերայի հետ և ձչում «ուռա՛»:

Բոլոր ծանոթները, հանդիպելով Իվանին, անպայման հարցնում էին՝ ծերունին ի՞նչպես տեղ հասավ, ի՞նչ է գրում, ի՞նչպես դուր եկավ նրան Մազնիտոգորսկը և գործարանը: Իսկ Իվանը շփոթվելով (քանի որ ծերունուց ոչ մի թուղթ չէր եկել) ամենքին պատասխանում էր, թե հայրը բարեհաջող տեղ է հասել:

Տիմոֆեյ Վասիլևիչից Իվանը լուր ստացավ միայն մեկ ու կես ամիս հետո և բոլորովին անսպասելի ճանապարհով: Մի անգամ ժողդատարանից պանգահարեցին դոմենյան ցեխ և պատվիրեցին նրան հաղորդել, որ անցնի դատավոր Կոլումեյցևայի մոտ: Նա պարմացավ, բայց հասկանալի է, գնաց ու տիաճորեն ապշեց Լիդիա Իվանովնայի պայրացկոտ տեսքից, իրեն «դուքով» դիմելուց և խոսելաձևի չորութունից: Նայելով իրեն ուղղակի խոցող, սևեռուն հայացքով, մռայլ աչքերով, որ նա մինչ այդ գիտեր իբրև վվարթ կամ ծաղրական, — դատավորը հարցրեց առանց նախաբանի.

— Ծնողներիդ դրամ ուղարկո՞ւմ եք:

Իվանը անսպասելիությունից ցնցվեց:

— Այո, — ասաց նա, խիստ կարմրելով նրա հայացքի տակ ու ամբողջովին կծկվելով ինչ-որ անհայտ դժբախտության կանխապագումից: — Այո... Ի՞նչ կա որ... Իհարկե ուղարկում եմ... Ոչ ծնողներիս — հորս: Ես մայր չունեմ: Յուրաքանչյուր երկրորդ կեսից ուղարկում եմ: Միայն վերջին անգամ չեմ ուղարկել. ախր ես ճամփի համար տվեցի նրան:

Հարցուփորձելուց հետո, ըստ որում ամեն մի բանի հանդեպ բժախնդրությամբ, նա վերջապես ականերև հանգստությամբ շունչ քաշեց ու նրա հայացքը մեղմացավ:

— Ես այդպես էլ ենթադրում էի,— ասաց նա և Իվանի ուսին դրեց իր ծանր ու գգվող ձեռքը:— Անդորրագրերը պահո՞ւմ ես:

— Անդորրագրե՞րը: Չգիտեմ... Հասիլ թե...

— Այդպես էլ ենթադրում էի,— կրկնեց նա գլուխը շարժելով:— Ահավասիկ հայցադիմում է ստացվել քո հորից: Քեզնից գանգատվում է, թե կուսակցության անդամ, դեպուտատ, տնատեր, հարուստ ես, բայց ալիսենտ չես վճարում. իբր ծնողներիդ, եղբայրներիդ ու քույրերիդ, որոնցից երկուսը անչափահաս են և մեկը կաղ, հաշմանդամ, թողել ես ճակատագրի քմահաճույքին:

Իվանը չփորձեց բացատրել: Նրա մեջ ինչ-որ բան կտրվեց: Նա գլուխը քաշեց ուսերի մեջ, մի պահ իրեն զգաց անցած ժամանակների դժբախտ ու անպաշտպան գյուղական տղա: Իսկ կինը նախում էր մեկուսի ու բարձրաձայն խորհում.

— Դե, քո փոխադրումների փաստը մենք ցանկացած ժամանակ կարող ենք փոստի միջոցով պարզել. հարցը դրանում չէ... Ես միայնակ չեմ որոշում, ատենակալներ ունեմ: Ամեն ինչ կպարզվի դատակամ նիստի ժամանակ. սակայն կարծում եմ, որ նրկատի ունենալով քո քաղնապավակությունը, կդատորոշենք նրա օգուտին քեզնից գանձել ամսական

հիսուն ռուբլի: Միանգամայն բավական է: Նա ունի կով, ոչխարներ, խոզ է պահում. նա թաղիքյա կոշիկներ է կարում... Հենց ինքն անձամբ ինձ ասաց: Հիսուն ռուբլի կվճարես նրան...

Այդ պահին նա նայեց Իվանին ու սսկվեց՝ ցընցված նրա դեմքի արտահայտությունից:

— Մի՞թե բանն այդ է,— ասաց Իվանը ձեռքը թափահարելով:

— Այո: Իհարկե: Հասկանում եմ,— ասաց կինը մեղմ ու կարծես մեղավոր ձայնով:

— Գուցե նա հենց այնպե՛ս... Առանց մտածելո՞ւ: Իր տգիտությա՞ն պատճառով... Հը՞,— շարունակեց նա հարցական, գրեթե աղաչական նայելով Լիդիա Իվանովնային:— Գուցե նրանք դժվա՞ր են ապրում: Հը՞...

Դուրս գալով դատարանի շենքից, Իվանը սարսափով մտածեց այն մասին, որ պետք է տուն գնալ. նա հիմա չի կարող տեսնել կնոջն ու Դարյա Ալեքսեննային, անգամ զավակներին, որոնք հավանորեն պատի այն կողմում «պապիկ» են խաղում: Եվ նա որոշեց գնալ զարեջրատուն, այնտեղ խմել երեք հարյուր գրամ ռուսական օղի, որպեսզի այդքան ամոթալի չլիներ: Սակայն երբ հասավ գետին, նրա աչքերի առջև բացվեց մշտապես աշխատող գործարանի սովորական, բայց իր վեհությանը շքանշանապատկերը: Թանձրացող աղջամուղջում զանապանագույն բոցերի խուրձերը կարմիրի ու նարնջագույնի տարբեր նրբերանգներով և սպիտակ կրակի կուրա-



ցուցիչ բռնկումները, մեկ այստեղ մեկ այնտեղ սըր-  
ընթաց ու համաչափ ճեղքում էին անշարժ իրերի  
սիշխարիը: Այդ աշխարհում, — հսկայամարմին, իր  
մեջ ընդգրկած մուշ սարերը, աղոտ լուսավորված  
տները, գետի թանձր ջրերը, երկնքի ծավալուն ամ-  
պերը՝ հապիվ լուսավորված անտեսանելի վերջա-  
լույսով, — գործարանն իր անընդհատ ծանր վարկե-  
րով մշտապես տրոփող մի սիրտ էր, գրեթե նույն-  
քան բարդ ու խորհրդավոր, որքան մարդկային  
սիրտը: Իվանը չորուխայտ քմծիծաղեց ու մրմըն-  
ջաց սիրով, թեպետ և ոչ առանց դառնության.

— Ահա՛ նա, Մազնի՛տկան: Նա՛ է քո գյուղը,  
քո հարազատ տունը, քո հայրը, քո մայրը...